

Հ.Մ.Ս. Ի ՄԱՐՏԱՅԻՆ ԴԵՊԻ 100-ԱՄԵԱԿ

ՏՕԲԹ Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ընթացիկ տարուան նոյեմբեր ամսուն, Հայ Մարմնամարզական Միությունը՝ Հ.Մ.Ս., իր «Մի՛շտ Պատրաստ» նուիրական կոչումին հաւատարիմ, անախընթաց ոգեւորութեամբ տօնախմբեց իր կազմաւորման յոբելիական 90-րդ տարեդարձը, տարաշխարհի հայադրոշմ գաղութներէն մինչեւ Հայաստան աշխարհ:

Իր ծննդավայր հիւսիսային Մուրիայէն՝ Բաղամայր Դամասկոս, Լիբանանէն՝ Փարիզ ու Լոնտոն, Ուրուկուէյէն՝ Արժանքին եւ Պրագի, Գալիֆորնիայէն՝ Հայաստան՝ Հայ Մարմնամարզական Միութեան շարքային, համակիր եւ երախտաշատ մարզասէր հայ հասարակութիւնը, բարձր գնահատելով մարզական նախապահով անոր ծաւալած ազգային, հայրենասիրական, մշակութային եւ հայապահպանման սրբազան առաքելութիւնը, «Մի՛շտ Պատրաստ» ծառայութեան ոգին՝ խոնարհամբարձ շարքերով ներկայ գտնուեցաւ անոր 90-ամեակին նուիրուած յոբելիական պերճաշուն, հոգեպարար եւ խոստումնալից տօնակատարութիւններուն եւ վերանորոգեց իր վստահութիւնը անոր ազգաշէն առաքելութեան հանդէպ:

Կասկած չկար, որ Հ.Մ.Ս. յոբելիական հանդիսութիւններուն իր մասնակցութիւնը բերող մարզասէր եւ գաղափարապաշտ հասարակութիւնը կը կազմէր աշխարհով մէկ ցրուած միշտ երիտասարդ, միշտ անվիատ եւ միշտ յանձնառու Հ.Մ.Ս.եան մեծ ընտանիքը, որ գինձ ծնած, սնած, Բաղամայր եւ բարեկամ պայմաններ էր ստեղծած անոր նուիրական առաքելութիւնը յաջողութեամբ պսակելու համար: 90-ամեակի յոբելիական ներկայ բարեբաստիկ առիթով, Հ.Մ.Ս.եան մեծ ընտանիքը հանդիսատրապէս կուգար վերանորոգելու իր նիւթական եւ բարոյական յանձնառութիւնը ի շահ անոր յառաջդիմութեան: Այդ կ'ապացուցանէին ինչպէս հեռաւոր օրրաններուն, նոյնպէս եւ 26 նոյեմբեր 2011-ին, Գալիֆորնիոյ Արեւմտեան ափին տեղի ունեցած յոբելիական փառահեղ տօնակատարութիւնները: Ժողովրդական առածը կ'ըսէ - Ցանաճող կը հնձնուի:

Այդ իմաստով, Հ.Մ.Ս. իր կազմաւորման առաջին իսկ շրջանէն

Շաբ.ը էջ 18

ԲԱՑԱՌԻԿ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ Հ.Մ.Ս. ՆՇԵՑ ԻՐ 90-ԱՄԵԱԿԸ



Անի Պէֆարեան, Նորա եւ Թադէոս Քէօրօղլեան, Կէրի Սիմանեան

Անցնող շաբաթավերջին գաղութիս գլխաւոր իրադարձութիւններէն մին էր Հ.Մ.Ս.ի Հիմնադրութեան 90-րդ տարեդարձի ճաշկերուցիթ պարահանդէսը, որ տեղի ունեցաւ Պըրպէյք քաղաքի «Տը Լիւքս» սրահին մէջ: Սոյն միջոցառումին նախագահութիւնն ստանձնած էին Տէր Եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրօղլեան: Օրուան հիւրերու շարքին էին թեմին բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.

Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայ Կաթողիկէ Համայնքի փոխ-ժողովրդապետ Հայր Արմենակ Վրդ. Պետրոսեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տէր Եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան եւ Տէր Եւ Տիկ. Համբիկ Սարաֆեան, Հոգշ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան, Արժ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան,

Շաբ.ը էջ 18

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵՓՈՆԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱՒ ԱԻԵԼԻ ՔԱՆ 12 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ



Հինգշաբթի, Նոյեմբեր 24-ին՝ Միացեալ Նահանգներու Գոհաբանութեան Օրը տեղի ունեցող «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թեյեթոն-դրամահաւաքի ընթացքին հանգանակուեցաւ աւելի քան 12 միլիոն տոլար, որ պիտի յատկացուի Արցախի մէջ իրագործուելիք ջրամատակարարման ծրագիրներուն:

Լոս Անճելըսէն սփռուող եւ 12 ժամ տեւող նուիրահաւաքին առիթ ունեցան հետեւելու գրեթէ աշխարհի բոլոր ծագերուն ապրող հայերը՝ Հայաստանի եւ սփռուքի տարածքին գործող արբանեակային բազմաթիւ հեռատեսիլի ալիքներուն շնորհիւ:

Շաբ.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ



Ս.Դ.Հ.Կ-ի պատուիրակութիւնը նախագահ Բակօ Սահակեանի հետ

Հայաստան Համահայկական Հիմնադրամի կազմակերպած տարեկան հեռուստամարաթոնի առիթով Լոս Անճելըս կը գտնուէր Արցախի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեան: Այս բարեպատեհ առիթէն օգտուելով Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի շրջանը ներկայացնող պատուիրակութիւն մը Նոյեմբերի 22ին, Հիլթոն պանդոկին մէջ հանդիպում մը ունեցաւ նախագահ Բակօ Սահակեանի հետ: Վսեմաշուք նախագահը ողջունելէ ետք ներկաները, խօսակցութեան առանցքը դարձաւ Լեռ-

նային Ղարաբաղէն ներս արձանագրուած որոշ յաջողութիւններն ու դիմակալուող դժուարութիւնները տարբեր բնագաւառներու մէջ: Ան նշեց կենսական անհրաժեշտութիւն նկատուող սահմանամերձ գիւղերու ջրամատակարարման եւ հայրենիք-սփիւռք համագործակցութեան հարցերը: Իսկ տնտեսական վերականգնումի խնդրով փոխադարձ արդիւնաւէտ նկատեց բաժնետիրական դրութեամբ, արտահասմանեան գործառնէրներու ներդրումները, յատկապէս ջրաէլեկտրակայաններու կառուցման գործին մէջ:

ՕՐԻՆԱԿԱՆ ԵՆ ԲՈԼՈՐ ՃԱՆԱՊԱՐՇՆԵՐԸ

ՓԱՍՏԱԹՂԱՅԻՆ ՎԻՄԱԿՈՐՈՒՄԸ ՊԱՐՏԱԴՐԻ Է

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Հայաստանի ներքաղաքական կեանքում այսօր մի տեսակ անորոշ-սպասողական իրավիճակ է ստեղծուել՝ այն իմաստով, որ հասարակութեան ուշադրութեան կենտրոնում յայտնուել են ներքաղաքական հակասութիւններն ու թաքնուած բախումները, իսկ թէ ինչ է կատարուում հիմնական «ճակատում»՝ համաժողովրդական շարժման եւ ռեժիմի պայքարի ոլորտում, այնքան էլ հասկանալի չէ: Աւելին, շատերը փորձում են հարցն այնպէս ներկայացնել, թէ իբր Հայ ազգային կոնգրեսը մինչեւ հերթական ընտրութիւններ այլեւս անելիք չունի եւ ընդամենը ժամանակ է ձգում՝ ներկայացնելով Սերժ Սարգսեանի պաշտօնակալութեան իրաւաքաղաքական հիմքեր: Փորձենք պարզաբանել իրավիճակը:

Սկսենք նրանից, որ Հայ ազգային կոնգրեսը ձգտում է իշխանափոխութիւն իրականացնել բացառապէս օրինական ճանապարհով, իսկ ՀՀ Սահմանադրութիւնը նախագահի հրաժարականի միայն երկու «օրինական ճանապարհ» է մատնանշում (դժբախտ դէպքերը չհաշուած): Առաջին տարբերակն այն է, որ նախագահն ինքն է հրաժարական տալիս, երկրորդը՝ այն, որ նախագահը կարող է «պաշտօնանկ արուել պետական դաւաճանութեան կամ այլ ծանր յանցագործութեան համար»: Այլ տարբերակ չկայ, այս երկուսն են: Հետեւաբար՝ արժէ առանձին-առանձին անդրադառնալ այդ տարբերակներին:

Սկսենք «ինքնակամ հրաժարականից»: Հասկանալի է, որ Սերժ Սարգսեանն ինքնակամ հրաժարական կը տալ միայն համաժողովրդական վիժիտարի ճնշման ներքոյ եւ միայն այն դէպքում, եթէ համոզուած լինի, որ այլեւս ի վիճակի չէ ղեկավարել երկիրը եւ վերահսկել իրավիճակը: Ընդ որում՝ համաժողովրդական այդ ճնշումը չի կարող մէկանգամեայ ակցիա լինել: Կոպիտ ասած՝ հարիւր հազարաւոր մարդիկ պէտք է առնուազն տասը օր մնան Երեւանի փողոցներում, որովհետեւ, ՀՀ Սահմանադրութեամբ, նախագահն իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողովին, բայց հրաժարականն ընդունուած է համարուած միայն այն դէպքում, եթէ նա տասը օր անց հաստատում է իր հրաժարականը: Այսինքն՝ կարող է պատահել այնպէս, որ հարիւր հազարաւոր մարդիկ փողոց դուրս գան, Սերժ Սարգսեանը հրաժարական տալ, մարդիկ գնան իրենց տները՝ յաղթանակը նշելու, բայց տասը օր անց նա չկրկնի իր հրաժարականը: Բայց կարելո՞րդ սա չէ: Կարելո՞րդ այն է, որ Սերժ Սարգսեանի ինքնակամ հրաժարականի տարբերակն այս պահին իրատեսական չէ: Կոնգրեսը չկարողացաւ բարձրացնել այդ ալիքը:

Մնում է երկրորդ տարբերակը, այն է՝ երբ Սերժ Սարգսեանը պաշտօնանկ է արուում «պետական դաւաճանութեան կամ այլ ծանր յանցագործութեան համար»: Բայց այս դէպքում էլ ՀՀ Սահմանադրութեամբ շատ յստակ արձանագրուած է, որ Ազգային ժողովը ձայների մեծամասնութեամբ որոշում է ընդունում եւ նախագահի պաշ-

տօնանկութեան իրաւաքաղաքական հիմքերը ներկայացնում Սահմանադրական դատարան: Հիմա ենթադրենք՝ այսօրուայ Ազգային ժողովն ինչ-որ հրաշքով վերափոխուած է եւ որոշում սկսել Սերժ Սարգսեանի իմպիչմենթի գործընթացը: Բայց ի՞նչ փաստաթուղթ պիտի ընդունի ձայների մեծամասնութեամբ եւ ուղարկի Սահմանադրական դատարան, որո՞նք են իրաւաքաղաքական հիմքերը: Հայ ազգային կոնգրեսն, ահա, հենց այդ փաստաթուղթն է մշակել: Յետոյ ինչ, որ գործող Ազգային ժողովն ամենայն հաւանականութեամբ չի օգտուի այդ փաստաթղթից: Եթէ մէկը դուրս է գալիս, ասենք, աղուէսի որսի, մեծ է հաւանականութիւնը, որ նա այդ օրը ոչ մի արդուէսի էլ չի հանդիպի, բայց արցանայ այնուամենայնիւ վերցնում է: Կոնգրեսի հրապարակած փաստաթուղթն, ահա, հենց այդ հրացանն է: Այսինքն՝ այն կարելո՞րդ գէնքը, որն անհրաժեշտ է սահմանադրական ճանապարհով Սերժ Սարգսեանի իմպիչմենթին հասնելու համար:

Բայց այստեղ մի ուրիշ նրբութիւն էլ կայ: Լաւ, ենթադրենք՝ առջեւում ձեռք է, համազգային պայքարի հզօր ալիք բարձրացնելու շանսերը փոքր են, եւ ընտրութիւններն այնուամենայնիւ հերթական են լինելու: Բայց արդե՞ք դրանից ինչ-որ բան է փոխուում: Կոնգրեսը փաստօրէն իր նախընտրական ծրագիրն է ներկայացնում. «Ահա այն փաստաթուղթը, որը մենք, Ազգային ժողովում մեծամասնութիւն ունենալու դէպքում, մղարկելու ենք Սահմանադրական դատարան եւ օրինական ճանապարհով հասնելու ենք Սերժ Սարգսեանի պաշտօնակալութեանը: Ուզո՞ւմ էք՝ արդէն այսօրուանից միացէք այս փաստաթղթին, չէ՞ք ուզում՝ ուրեմն արդէն այսօր բարձրացնէք այս մասին, որպէսզի մարդիկ թիւրիմացութեան մէջ չընկնեն»:

Եւ, ուշադրութիւն դարձրէք, Կոնգրեսը ժողովրդին ընտրութեան հնարաւորութիւն է տալիս: «Ուզո՞ւմ էք, որ Սերժ Սարգսեանն ինքնակամ հրաժարական տալ, եկէք մի քանի հարիւր հազար մարդով տասը օր շարունակ մնանք Երեւանի կենտրոնում, չէ՞ք ուզում՝ մեզ հնարաւորութիւն տուէք նոյն արդիւնքին հասնել Ազգային ժողովի միջոցով»: Այնպէս որ՝ իրականում ամէն ինչ իր ունտով է ընթանում: Եւ շտապելու կարիք առանձնապէս չկայ:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆՆ ԱՐԵՑ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԳՈՐԾԸ

ՅԱԿՈՐ ԲԱԴԱԼԵԱՆ

Լեւոն Տէր-Պետրոսեանը բաւական ծանր կացութեան առաջ է դրել Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանին: Նոյեմբերի 25-ի հանրահաւաքին յայտարարելով այն մասին, որ Կոնգրեսը պատրաստ է գործակցել Գագիկ Ծառուկեանի հետ, եթէ նա փաստացի հրաժարուի Ռոբերտ Քոչարեանից եւ Սերժ Սարգսեանից, Լեւոն Տէր-Պետրոսեանը ԲՀԿ առաջնորդին դրել է այսպէս ասած երկու քարի արանքում, նոյնիսկ երեք քարի արանքում՝ հասարակութեան, Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի:

Կոնգրեսի առաջնորդը Ծառուկեանին փաստացի ստիպում է մէկ անգամ եւս հաւատարմութիւն յայտնել Սերժ Սարգսեանին, ինչը Ծառուկեանն արեց մի քանի շաբաթ առաջ, երբ հարցազրոյցով հաւաստեց, որ հաւատարիմ է Փետրուարի 17-ի կոալիցիոն յուշագրին:

Հանրապետականն էլ կարծես թէ հասկացել է պահը եւ լուծում է, Ծառուկեանին դնելով էլ աւելի ծանր կացութեան առաջ: Բանն այն է, որ խօսելով, անկախ այն ամէնից, թէ ինչ կը խօսուէր, ՀՀԿ, աւելի շուտ Սերժ Սարգսեանը, Տէր-Պետրոսեանի յայտարարութեան պատասխանատուութեան կամ ծանրութեան մի մասը կը վերցնէր իր վրայ, թեթեւացնելով ԲՀԿ բեռը: Պատասխանելով Տէր-Պետրոսեանին, Հանրապետականը կը թեթեւացնէր Ծառուկեանի պատասխանը:

Մինչդեռ, Սերժ Սարգսեանը լուծում է եւ նրանց թողնում դէմ առ դէմ, ԲՀԿ առաջնորդին ստիպելով կամ լռելով հաւատարմութիւն յայտնել, կամ էլ դա անել բարձրաձայն: Միւս տարբերակը այն է, որ Ծառուկեանը հրաժարուի Քոչարեանից եւ Սերժ Սարգսեանից, ինչը իհարկէ բաւական աներեւակայելի մի բան է:

Այլ կերպ ասած, Տէր-Պետրոսեանը, խօսելով Բարգաւաճ Հայաստանի մասին՝ իշխանութիւնից դրա պոկուելու կոնտեքստում, գործնականում էլ աւելի անհնար է դարձնում այդ նոյնիսկ տեսական հնարաւորութիւնը, էլ աւելի խորը մղելով դէպի իշխանութիւն: Ինչ որ կերպ կարելի է պատկերացնել, որ Ծառուկեանն ասենք հրաժարուի Սերժ Սարգսեանին սատարելուց: Բայց, մտածել, որ նա Ռոբերտ Քոչարեանից կը հրաժարուի, երբ միակ գործիչն է եղել,

որ յստակ յայտարարել է քաղաքականութիւն վերադառնալու նրա քաղաքական եւ բարոյական իրաւունքի մասին:

Էլ ինչ բարոյական, քաղաքական եւ նաեւ գուցէ տնտեսական իրաւունքով է Գագիկ Ծառուկեանը այսպէս ասած հրաժարուելու եւ տարանջատուելու Ռոբերտ Քոչարեանից:

Խնդիրն այն չէ, թե Ծառուկեանը Քոչարեանի հետ է այժմ: Միգուցէ նա տարանջատուած է, այն էլ վաղուց, այն էլ աւելին, քան ասենք կարող էր պատկերացնել Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Բայց ինչպիսիքն է, որ մի բան է տարանջատուած լինելը, մէկ այլ բան է այդ մասին յայտարարելը՝ թէ ասենք ես Ռոբերտ Քոչարեանի հետ որեւէ կապ չունեմ: Բանն այն է, որ այստեղ Տէր-Պետրոսեանը Ծառուկեանին կրկնակի ծուղակն է գցել, որովհետեւ անկախ այն բանից, թէ ինչ կ'աւար ԲՀԿ առաջնորդը Կոնգրեսի հետ համատեղ հեռանկարի մասին, միեւնոյն է, նա կարծես թէ ստիպուած է անդրադառնալ Քոչարեանի թեմային, որովհետեւ այդ թեմայի մասին լռելու դէպքում կարող է ակամայ հաւաստել, որ ուրեմն Տէր-Պետրոսեանն իրաւացի է, եթէ նրան այժմ կապուած է Քոչարեանի հետ:

Ահա այդ ամբողջ համատեքստում պարզ է, որ Սերժ Սարգսեանն այդ թեմայով ասելիք ու անելիք գրեթէ չունի՝ ամէն ինչ արեց ու ասեց Լեւոն Տէր-Պետրոսեանը: Սարգսեանին թերեւս մնում է միայն շնորհակալութիւն յայտնել Կոնգրեսի առաջնորդին, իշխանութեան մէջ իր հիմնական մրցակից բեւեռին այդքան ծանր կացութեան մէջ դնելու համար:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏՕՒԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$120.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY



ՐԱՅԱՍՏԱՆ

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ.- «ՆԱԽԱԳԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՈՉ ՊԵՏԱԿԱՆԱՎԱՅԵԼ ՅԱՐՁԱԿՈՒՄ»

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը սուր քննադատութեան է ենթարկել Սերժ Սարգսեանի Նոյեմբեր 26-ին արած յայտարարութիւնը՝ անուանելով այն «ոչ պետականավայել յարձակում» ոչ միայն Րաֆֆի Յովհաննիսեանի ու «Ժառանգութիւն» կուսակցութեան, այլև ողջ ընդդիմութեան վրայ:

Յիշեցնենք, Րաֆֆի Յովհաննիսեանը անցած շաբաթ նամակ էր յղել Սերժ Սարգսեանին եւ ազատ ու արդար ընտրութիւններ անցկացնելու նպատակով 15 քայլ առաջարկել: Դրան ի պատասխան՝ Սերժ Սարգսեանը շաբաթ օրը ասել էր, թէ Րաֆֆի Յովհաննիսեանը այդ առաջարկները արել է ոչ թէ սրտի ցաւով, այլ ցանկացել է վարկաբեկել ազատ եւ արդար ընտրութիւններ անցկացնելու իշխանութիւններին նախաձեռնած գործընթացը:

«Մենք թափ ենք հաւաքում, եւ մեր նպատակն է անցկացնել շատ լաւ ընտրութիւններ: Այստեղ ուզում եմ շեշտել, որ վերջին երկու ընտրութիւնները՝ ե՛ւ նախագահական, ե՛ւ խորհրդարանական, միջազգային դիտորդների կողմից գնահատուեցին որպէս միջազգային չափանիշներին հիմնականում համապատասխանող ընտրութիւններ: Եւ մեր նպատակն է, որպէսզի այդ «հիմնականում» բառը հանուի: Կարծում եմ, որ մեզ ոչինչ չի խանգարելու: Մենք ոչ միայն ընտրութիւններն ենք անցկացնելու

լաւագոյն ձեւով, այլ բոլոր քաղաքական գործընթացները՝ առանց ուշադրութիւն դարձնելու չարութեամբ լցուած մարդկանց, չստեղծելով զանազատականին, որովհետեւ իրենք իրաւունք չունեն գնահատական տալու, այլ՝ իրենց կարծիքին: Հաշուի չառնելով նրանց թոյնը, հաշուի չառնելով նրանց վատ նպատակը՝ մենք փորձելու ենք ամէն ինչ բարելաւել, եւ կարծում եմ, որ բոլորը հնարաւորութիւն կ'ունենան, այսօր էլ ունեն, դրանում համոզուելու», - ասել էր նախագահը:

«Ժառանգութեան» վարչութիւնը Նոյեմբեր 28-ին տարածած պատասխան-յայտարարութիւնում նշում է, որ նման պահուածքն ու անհամարժէք գնահատականները յարիր չեն երկրի դեկավարին:

«Դա վկայում է, որ ՀՀ իշխանութիւնները չեն պատրաստուում հրաժարուել վարչական լծակներն օգտագործելու, ընտրացուցակները խարդախելու, բանակն ու եկեղեցին քաղաքականութեան մէջ ներքաշելու եւ այլ արատաւոր գործելակերպից: Չափազանց մտահոգիչ է, որ նախագահի կողմից 2008 թուականի նախագահական ընտրութիւնները դրական են գնահատուում եւ վկայակոչուում իբրեւ միջազգային չափանիշներին հիմնականում համապատասխանող, ինչից ենթադրուում է, որ կարող է լինել նոր «Մարտի 1», - ասուած է «Ժառանգութեան» յայտարարութեան մէջ:

40 ՏՈՎՈՍՆ ՈՒԶՈՒՄ Է ԱՐՏԱԳԱՂԹԵԼ ՐԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի իրականացրած հարցումների համաձայն, արտագաղթի ցուցանիշը երկրում կազմում է 40 տոկոս: Հարցմանը մասնակցել է 1065 երիտասարդ: Ըստ ասոցիացիայի նախագահ Գէորգ Պողոսեանի՝ այսօր Հայաստանի թիւ մէկ մարտահրաշքը դեմոգրաֆիական խնդիրներն են. «Սա ոչ թէ միգրացիա է, այլ հայաթափում: Հարիւրաւոր երկրներում կան միգրանտներ, դա նորմալ է: Բայց երբ երկրի բնակչութեան 30 տոկոսն է դուրս գնում, դա հայաթափում է»:

Գէորգ Պողոսեանի խօսքով, այսօր հիմնական մտահոգութիւնն այն է, որ ծնելիութեան ցուցանիշը մօտ 2 անգամ նուազել է, երիտասարդ ընտանքիների թիւը քիչ է: Ստեղծուած իրավիճակից դուրս գալու համար, ըստ նրա, պէտք է անել այն, ինչ անում են միւս երկրները՝ խրախուսել ծնելիութիւնը: «Պետութիւնը պէտք է խրախուսի, որ երիտասարդ ընտանքներն ուզենան շատ թուով երեխաներ ունենալ: Եթէ մենք

կարող ենք բանակի, զէնքի, ճանապարհաշինութեան համար դրսից գումարներ բերել, նոյն լրջութեամբ պէտք է դրսից գումարներ բերենք, որ մեր ընտանքներում լինեն 3-4 երեխաներ», - նշեց սոցիոլոգը:

Հարցուած երիտասարդների 62%-ն իր ապագան տեսնում է Հայաստանում, 15.4%-ը մտադիր է հեռանալ, իսկ 22%-ը հնարաւոր են համարում հեռանալը: Պարզուել է, որ աղջիկներն աւելի կապուած են հայրենիքի հետ, քան տղաները: Երկրից հեռանալու դրդապատճառներն են դրսում ուսում ստանալը, գործազրկութիւնն ու վատ տնտեսական վիճակը: Երիտասարդների 90.7%-ն իրենց համարում են հաւատացեալ եւ Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդներ են: Հարցում է երիտասարդների 25.9%-ը նշել է, որ ընդհանրապէս մտադիր չէ ընտանիք կազմել:

Հարցումներն անցկացուել են այս տարուայ Հոկտեմբերի 17-25-ը, եւ ինչպէս Գէորգ Պողոսեանը նշեց, պատուիրատուն իրենք են:

ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՄ ՐԱՅԱՍՏԱՆՈՒՄ 270 ՅԱԶՐ ՍԱՐԴ ԱՂՔԱՏԱՅԵԼ Է

Ֆինանսատնտեսական ճգնաժամի 2 տարիների ընթացքում՝ 2008-9 թ.թ. Հայաստանում 270 հազ. մարդով աւելացել է աղքատների թիւը՝ կազմելով 1.2 մլն մարդ: Այդ մասին նշուած է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայութեան Նոյեմբերի 29-ին հրատարակած «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատութիւնը 2011» հրատարակման մէջ:

2010թ. աղքատութեան մակարդակը Հայաստանում կազմել է 35.8% 2008թ. արձանագրուած 27.6%-ի դիմաց: Ծայրայեղ աղքատութեան մակարդակը 2010թ. կազմել է 3.0% 2008թ. արձանագրուած 1.6%-ի դիմաց: Նշենք, որ 2004 թ. Հայաստանում աղքատ էր համարուում բնակչութեան 54 տոկոսը:

Աղքատ են համարուում այն անձինք, որոնց ամսական եկամուտները ցածր են 33.5 հազ. դրամից (մօտ 90 դոլար):

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ, ՅԱԿ-Ը ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍ ԼԻՆԻ ՅԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ԲՅԿ-Ի ՅԵՏ

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի առաջնորդը Լեւոն Տէր-Պետրոսեանը Նոյեմբեր 25-ի հանրահաւաքում խօսեց իշխող կոալիցիայի մաս կազմող «Բարգաւաճ Հայաստանի» հետ համագործակցելու նպատակայարմարութիւնից:

«Եթէ պարզուի, որ «Բարգաւաճ Հայաստան» անկեղծօրէն մտադիր է դուրս գալ կոալիցիայից եւ պայքարել իրապէս արդար ու օրինական ընտրութիւններ անցկացնելու համար, ապա, Հայ ազգային կոնգրէսն այդ պարագայում պէտք է պատրաստ լինի լրջօրէն քննարկել նրա հետ համագործակցելու հնարաւորութիւններն ու հեռանկարները», - յայտարարեց կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը, - «Այդ համագործակցութիւնը կարող է ունենալ տարբեր դրսեւորումներ, որոնք կը յստակեցուեն քննարկումների ընթացքում՝ բացառելով միայն միասնական ցուցակով ընտրութիւններին մասնակցելու տարբերակը»:

Հնարաւոր շահարկումները կանխելու նպատակով նա հարկ համարեց աւելացնել, որ «սա ոչ թէ Բարգաւաճ Հայաստանի ուղղուած համագործակցութեան առաջարկ է, այլ ընդամէնը քաղաքագիտական վերլուծութիւն կամ խորհելու նիւթ ու ընդգծեց, որ կոնգրէսի եւ ԲՀԿ-ի միջեւ մինչ այժմ որեւէ շփում կամ նախնական քննարկում տեղի չի ունեցել»:

Վերլուծելով Հայաստանում առկայ քաղաքական իրավիճակը, կոնգրէսի առաջնորդը եզրակացրեց, որ Հանրապետական կուսակցութեան եւ «Բարգաւաճ Հայաստանի» միջեւ հակամարտութիւնը Հայաստանի եւ թուրքի միջեւ կազմել է 212 միլիոն դոլար: Հինգ տարի առաջ այց ցուցանիշը 98 միլիոն էր, 12 տարի առաջ՝ 41 միլիոն: Թուրք գործարար թունջայ Օզենը Հայաստանում աշխատում է արդէն 14 տարի: Նրա բիզնեսի արդիւնքում հայկական թիւերն են ու պաղպաղակը թուրքական պլաստիկ տարաներով եւ փաթեթաւորմամբ, Miray ընկերութեան թուրքական ստանարաններում թուրքիայում սպասում են սպառողներին: Թուրք գործարարի գործունէութեան հիմնական ոլորտը սննդի արդիւնաբերութեան մատակարարումն է: Հայերէն չիօսող Օզենի հայ գործընկերներն են «Ջեմուկը», Coca-Cola-ն, «Կիլիկիան», «Կոտայքը», «Գիւմրին», «Աշտարակ-կաթը», «Թամարան», «Նատալի Ֆարմը»: Օզենի ընկերութիւնը եւ արտադրում է, եւ ներմուծում է Հայաստան: NEWS.am-ի թղթակիցը գրուցել է թունջայ Օզենի հետ:

Գրուցելով Հայաստանում առկայ քաղաքական իրավիճակը, կոնգրէսի առաջնորդը եզրակացրեց, որ Հանրապետական կուսակցութեան եւ «Բարգաւաճ Հայաստանի» միջեւ հակամարտութիւնը Հայաստանի եւ թուրքի միջեւ կազմել է 212 միլիոն դոլար: Հինգ տարի առաջ այց ցուցանիշը 98 միլիոն էր, 12 տարի առաջ՝ 41 միլիոն: Թուրք գործարար թունջայ Օզենը Հայաստանում աշխատում է արդէն 14 տարի: Նրա բիզնեսի արդիւնքում հայկական թիւերն են ու պաղպաղակը թուրքական պլաստիկ տարաներով եւ փաթեթաւորմամբ, Miray ընկերութեան թուրքական ստանարաններում թուրքիայում սպասում են սպառողներին: Թուրք գործարարի գործունէութեան հիմնական ոլորտը սննդի արդիւնաբերութեան մատակարարումն է: Հայերէն չիօսող Օզենի հայ գործընկերներն են «Ջեմուկը», Coca-Cola-ն, «Կիլիկիան», «Կոտայքը», «Գիւմրին», «Աշտարակ-կաթը», «Թամարան», «Նատալի Ֆարմը»: Օզենի ընկերութիւնը եւ արտադրում է, եւ ներմուծում է Հայաստան: NEWS.am-ի թղթակիցը գրուցել է թունջայ Օզենի հետ:

ԹՈՒՐԷ ԳՈՐԾԱՐԱՐԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԲԻԶՆԵՍ Է ՎԱՐՈՒՄ ՐԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Անցած տարի ապրանքաշրջանառութիւնը Հայաստանի եւ թուրքի միջեւ կազմել է 212 միլիոն դոլար: Հինգ տարի առաջ այց ցուցանիշը 98 միլիոն էր, 12 տարի առաջ՝ 41 միլիոն: Թուրք գործարար թունջայ Օզենը Հայաստանում աշխատում է արդէն 14 տարի: Նրա բիզնեսի արդիւնքում հայկական թիւերն են ու պաղպաղակը թուրքական պլաստիկ տարաներով եւ փաթեթաւորմամբ, Miray ընկերութեան թուրքական ստանարաններում թուրքիայում սպասում են սպառողներին: Թուրք գործարարի գործունէութեան հիմնական ոլորտը սննդի արդիւնաբերութեան մատակարարումն է: Հայերէն չիօսող Օզենի հայ գործընկերներն են «Ջեմուկը», Coca-Cola-ն, «Կիլիկիան», «Կոտայքը», «Գիւմրին», «Աշտարակ-կաթը», «Թամարան», «Նատալի Ֆարմը»: Օզենի ընկերութիւնը եւ արտադրում է, եւ ներմուծում է Հայաստան: NEWS.am-ի թղթակիցը գրուցել է թունջայ Օզենի հետ:

Հայաստանում աշխատելուց առաջ դուք ծանօթ էին հայերի հետ:

Բնականաբար, նախքան այստեղ գալը ես ծանօթացայ մի քանի գործարարների հետ: Ես ասում էի նրանց. դու հայ ես, ես թուրք եմ, բացենք գործարան եւ զարգացնենք բիզնէսը: Շատ սովորական է, որ ես բազմաթիւ մտավախութիւններ ունէի: Սակայն դրանց 90 տոկոսը չեղան: Բոլոր ինդիւրները լուծուում էին առանց յատուկ բարդութիւնների: Իհարկէ, ինդիւրներ ծագում են, սակայն դրանք լուծելի են:

Թուրքիայից ապրանքներ արտահանելիս խնդիրներ չէք ունենում Հայաստանի ուղղութեամբ ձեւակերպելու պատճառով:

Ապրանք արտահանելիս մենք խնդիրներ չեն ունենում: Գործարքը տեղի է ունենում հետեւեալ կերպ. մենք ձեւակերպում ենք հաշիւ-ապրանքագիրը՝ կապուած թուրքիայից փոխադրումների հետ, ապրանքը դուրս ենք բերում երկրից, այնուհետեւ սկսում է գործակցութիւնը հայ գործընկերների հետ, որոնք էլ լուծում են Հայաստանի հասցնելու բոլոր խնդիրները:



Լեւոն Տէր-Պետրոսեան

տանի» միջեւ հակամարտութիւնն «արդէն կայացած փաստ է»:

Սերժ Սարգսեանի նախաձեռնած կազմակերպութիւնների մասին Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ դրանք իշխանութեան թուլացման դրսեւորումն են:

«Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ առանց բացառութեան բոլոր դէպքերում հրաժարականները եղել են ոչ թէ ինքնակամ, այլ հարկադրական, այն էլ՝ ոչ թէ գաղափարական կամ քաղաքական, այլ բացառապէս ուրիշ նկատառումներով: Ոչ ոքի համար գաղտնիք չէ նաեւ, որ հարկադրանքը բխել է երկրի գործող նախագահից: Եթէ Սերժ Սարգսեանի իշխանութիւնը թոյլ չլիներ եւ աւելի թուլանալու վտանգ չզգար, նա բոլորովին կարիք չէր ունենայ ընտրութիւնների նախօրեակին այսպիսի ցնցումների գնահատելու», - յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեանը:



ԼՈՒՐԵՐ

ՀՈԳԵԻՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՀԵՏ ՔԱՇԵԼ ԴԻՊՈՒԿԱՅԱՐՆԵՐԻՆ



Ձախեն Կոմիտասի հոգևոր առաջնորդ Ալլահշուբիբ Փաշազադե, Համայն Ռուսիոյ Պատրիարք Կիրիլ առաջին, Սերժ Սարգսեան եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդ

Երեւանում Երկուշաբթի, Նոյեմբեր 28-ին մեկնարկել է ԱՊՀ-ի Միջկրօնական խորհրդի նախագահութեան նիստը, որին մասնակցելու նպատակով առաջին անգամ Հայաստան է ժամանել Կոմիտասի մասնաճյուղի վարչութեան նախագահ Շէյխու ուլ Իսլամ Ալլահշուբիբը Փաշազադէն:

Նիստի շրջանակներում փակ դռներով տեղի ունեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, Ադրբեյջանի հոգևոր առաջնորդ Ալլահշուբիբը Փաշազադէի եւ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Կիրիլ առաջինի միջեւ, ովքեր հանդիպումից յետոյ հանդէս եկան համատեղ յայտարարութեամբ:

Յայտարարութիւնը ընթերցեց Կիրիլ առաջինը, ով, մասնաւորապէս, ասաց, որ երեք հոգևոր առաջնորդները կոչ են անում զարաբաղաւոր բնակչական շրջան գծից հետ քաշել դիպուկահարներին:

«Հետեւողականօրէն կոչ ենք անում շրջան գծից հետ քաշել դիպուկահարներին, որպէսզի այլևս մարդկանց արիւն չթափուի եւ չլինեն զոհեր: Ուժի գործադրումից հրաժարուելը պէտք է ներառի նաեւ այս կարեւոր փոփոխութիւնը: Եթէ արիւն չթափուի, կը փոխուի բարոյահոգեբանական մթնոլորտը, ինչն էլ նոր հեռանկարներ կը բացի հակամարտութեան խողովակաւորման համար: Մենք աղօթում ենք, որ երկու երկրների ինչպէս ղեկավարների, այնպէս էլ ժողովուրդների փոխարարներութիւնները քայլ առ քայլ փոխուեն դէպի լաւը», -

յայտարարեցին հոգևոր առաջնորդները:

Աւելի վաղ, ելույթ ունենալով ԱՊՀ-ի Միջկրօնական խորհրդի նախագահութեան նիստին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը եւս անդրադարձաւ զարաբաղեան խնդրին: Սարգսեանն ասաց՝ հակասութիւնները եւ խնդիրները պէտք է կարգաւորուեն ոչ թէ լարման եւ սպառնալիքների մեծացման, այլ շփումների, բանակցութիւնների եւ համագործակցութեան միջոցով:

Ղարաբաղեան հակամարտութեանն իր ելույթում անդրադարձաւ նաեւ Կոմիտասի մասնաճյուղի վարչութեան նախագահ Շէյխու ուլ Իսլամ Ալլահշուբիբը Փաշազադէն: Սերժ Սարգսեանը, սակայն, հենց Փաշազադէի ելույթից առաջ, երբ խօսքը դեռ նրան էր փոխանցուել, հեռացաւ սրահից: Նիստը վարող Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Կիրիլ առաջինը յայտարարեց, որ նախագահն աչտու աչլ հանդիպումներ է ունի եւ այդ պատճառով չի կարող մինչեւ վերջ ներկայ գտնուել:

Ադրբեյջանի հոգևոր առաջնորդը յայտարարեց, թէ, ցաւօք սրտի, այսօր իրականութիւնն այն է, որ ԱՊՀ-ի տարածքում, այդ թւում՝ Կովկասում միլիոնաւոր մարդիկ ստիպուած են ապրել փախստականի կարգավիճակով, ինչը խոչընդոտում է մարդկանց կեանքի բարելաւմանը: Իսկ Ղարաբաղեան հակամարտութեան հետեւանքները, ըստ Փաշազադէի, շարունակում են ծանր բեռ մնալ հայ եւ ադրբեյջանցի ժողովուրդների ուսերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՌԱՋՆԹԱՅ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի գլխաւորած պատուիրակութիւնը Նոյեմբեր 29-ին ժամանեց Թբիլիսի: Վրաստանի նախագահի հետ հանդիպումից յետոյ Սերժ Սարգսեանը հանդէս եկաւ յայտարարութեամբ: Նա նշեց, որ փոխադարձ այցելութիւնները յաճախակի են դարձել եւ բխում են ժողովրդավարութեան սկզբունքից:

Նա արձանագրեց, որ 2011 թուականը համագործակցութեան առումով աննախադէպ է. «Վերջին 2 տարիների ընթացքում վերելք ենք ապրել պաշտպանութեան, կրթութեան, տրանսպորտի բնագաւառներում:

Նա նշեց, որ իր վրացի պաշտօնակցի հետ քննարկել են մի շարք հարցեր: «Այս տարի 20 տոկոսանոց տնտեսական աճ է գրանցուել, թէպէտ պէտք է նշել, որ ցուցանիշները փոքր են, եւ վստահ ենք, որ ունենք խնդիրներ, որոնց լուծման արդիւնքում կարող ենք վերելք ապրել: Առաջնահերթութիւն ենք տալիս էներգետիկայի եւ տրանսպորտի զարգացմանը, Հիւսիս-Հարաւ ատոմային էներգիայի կառուցմանը, որը Պարսից ծոցը կը կապի վրացական ֆոթի նաւահանգիստին»:

ԱՐԱ ԳՈՉՈՒՆԵԱՆ. «ԹՈՒՐՔԻԱՆ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԿՏԻՎՑՄԱՆ Ե ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ»

Թուրքիան աստիճանաբար հայ-թուրքական յարաբերութիւնների նորմալացման է պատրաստուում: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Ստամբուլի հայկական «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոչունեանը՝ մեկնաբանելով հայ-թուրքական արձանագրութիւնների վերաբերեալ թուրքիայի նախագահ Աբդուլա Գիւլի այն յայտարարութիւնը, թէ «դժուար խնդիրները մէկ քայլով չեն լուծուում»:

«Այդ խօսքերում ոչ մի անսպասելի բան չկար: Եթէ նախագահն ասում է, որ խնդիրները մէկ քայլով չեն լուծուում, նշանակում է, նա մի քանի քայլ նկատի ունի», - նշեց գրուցակիցը՝ աւելացնելով, որ որոշակի կապ կայ Գիւլի եւ վարչապետ էրդողանի՝ 1937-88 թթ. Դերսիմի իրադարձութիւնների համար ներողութիւն խնդրելու մասին յայտարարութեան միջև: «Ուղղակի կապի մասին խօսել պէտք է, սակայն դրանք իրարից էլ չի կարելի առանձնացնել: Էրդողանի խօսքերից չեստոյ թուրքական մամուլն առանց դադարի խօսում եւ քննարկում է, թէ այդ յայտարարութիւնն ինչպէս է անդրադառնալու Հայկական հարցի վրայ», - նկատեց խմբագիրը:

Արա Գոչունեանի խօսքով, էրդողանի յայտարարութիւնը բաւականին համարձակ էր. «Թուրքիան աստիճանաբար հանրութեան առջեւ բացում է իր պատմութեան սեւ էջերը: Վարչապետի յայտարարութիւնը միանշանակ չընդունուեց, այդ թւում՝ նրա համախոհների շրջանում: Սակայն նա քաղաքական արիութիւն դրսևորեց եւ ներողութիւն խնդրեց:

ՖՐԱՆՍԻԱՆ ՀԱՅ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԻՆ 2000-ԱՎԱՆ ԵՐՕ ԿԸ ՏԱՅ ԵՒ ՀԵՏ ԿՈՒՂԱՐԿԻ

Ֆրանսիայի իշխանութիւններն իրենց երկրում բնակուելու թոյլտուութիւն չատացած փախստականներին մինչեւ 2000 եւրօ կը վճարեն (իւրաքանչիւր անձի համար), եթէ նրանք կամաւոր համաձայնեն հայրենիք վերադառնալ:

Ինչպէս գրում է ֆրանսիական Le Monde պարբերականը, Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Կլոդ Գեանը յայտարարել է, որ այդպիսով իրենք մտադիր են վերջ դնել այն դէպքերին, երբ ներգաղթեալները, բնակութեան համար թոյլտուութիւն չատանալով, համալրում են ապօրինի ներգաղթեալների շարքը:

«Փախստականներին ապաստան տրամադրելու մեր համակարգը վստահի տակ է, քանի որ յաճախ այն օգտագործուում է մեր երկրում ապօրինի կերպով ամբարանուելու նպատակով», - Փարիզում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է Գեանը: Իր խօսքներն ապացուցելու համար նախարարը որոշ թուրք է ներկայացրել. վերջին 4 տարուայ ընթացքում Ֆրանսիայում փախստականների թիւը 55 տոկոսով

Առաջ մի նախադրեալ չկայ կարծելու, որ նման մօտեցումը կարող է կիրառուել Հայկական հարցի դէպքում, սակայն, ընդհանուր առմամբ, դրական միտումներ են ուրուագծուում», - նկատեց Գոչունեանը:

Նշենք, որ թուրքիայի վարչապետը յայտարարել էր, թէ եթէ պէտք լինի, Դերսիմի կոտորածների համար ինքը պետութեան անունից ներողութիւն կը խնդրի եւ խնդրում է: Նա Դերսիմի կոտորածների համար մեղադրել էր «Ժողովրդա-հանրապետական» - ին՝ պնդելով, որ այն ժամանակ այդ կուսակցութիւնն է եղել իշխանութեան:

Յիշեցնենք, որ Դերսիմի ապսամբութիւնը թուրքական իշխանութիւնները արեան մէջ են խեղդել՝ վերացնելով հազարաւոր գիւղեր: Տարբեր աղբիւրների հաղորդմամբ՝ Դերսիմի կոտորածներին զոհ է գնացել մինչեւ 100 հազար հոգի:

1915-ի Հայոց ցեղասպանութիւնից փրկուած, եւ Դերսիմի տարբեր գիւղերում պատսպարուած հազարաւոր հայերը 1938-ին կրկնակի ցեղասպանութեան ենթարկուեցին:

Իր հերթին թուրքիայի նախագահ Գիւլը Լոնդոնում պատասխանելով հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման մասին հարցին, ասել էր. «Յարաբերութիւններն այնքան են սառած, որ մէկ անգամ փչելով չեն հալուի»: Միաժամանակ նա աւելացրել էր, որ հայ-թուրքական արձանագրութիւնները չի կարելի ամբողջութեամբ մահացած համարել:

Նախարարը յաւելել է, որ մինչեւ 2011թ. վերջ, ապաստան տրամադրելու մասին 60,000 միջնորդութիւն է քննուելու, իսկ 2008թ. տուեալներով այդ թիւը 42,6 հազար է կազմել:

Գեանը նշել է, որ փախստականների մեծ մասը Ֆրանսիա է ժամանում Բանգլադէշից եւ Հայաստանից, եւ քանի որ Ֆրանսիայի փախստականների եւ քաղաքացիութիւն չունեցող անձանց պաշտպանութեան վարչութիւնը վերոնշեալ երկրները, ինչպէս նաեւ Մոլդովան եւ Չեռնոգորիան դասել է այնպէս կոչուած անվտանգ երկրների շարքը, ուստի նախ եւ առաջ արագացուելու է հենց այդ երկրներից գաղթած անձանց գործերի քննութիւնը:

Ֆրանսիայի իշխանութիւնները իւրաքանչիւր տարի մերժում են ապաստան ստանալու համար միջնորդութիւն ներկայացրած փախստականների 70-80 տոկոսին: Օրէնքի համաձայն՝ մերժուած անձինք պէտք է մէկ ամսուայ ընթացքում լքեն երկրի տարածքը, իրականում, սակայն, այլ բան է տեղի ունենում:

Նա նշեց, որ Հայաստանի եւ Վրաստանի յարաբերութիւնները կառուցողական են եւ բարի-դրացիական: Նախագահները քննարկել են նաեւ տարածաշրջանային համագործակցութեան հարցերը:

«ՄՈՍԿՈՒԱՆ ՔԱՅԼԵՐ Է ԶԵՌՆԱՐԿՈՒՄ ԻՐԵՆԻՑ ԵՐԵՒԱՆԻ ԿԱԽՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ ԱՊԱՅՈՒՄԵԼՈՒ ՅԱՄԱՐ»

Հայաստանի քաղաքական կեանքում վերջին շրջանում տեղի ունեցած զարգացումներին է անդրադարձել ամերիկեան «Ստրատֆոր» վերլուծական կենտրոնը:

«Մի շարք հայ պաշտօնեաներ անցած ամսուայ ընթացքում կամ հրաժարական տուեցին, կամ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով պաշտօնից հեռացուեցին: Այդ պաշտօնեաների թվում են՝ ՀՀ ռադիոկապիտալ Ալիկ Սարգսյանը, Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեանը»,- հարցրում է անգլալեզու Eurasianet.org կայքը՝ վկայակոչելով «Ստրատֆոր»-ի հրատարակումը:

«Քաղաքական վերադասարկումներ Հայաստանում նախկինում էլ տեղի են ունեցել, սակայն հրաժարականների եւ պաշտօնանկութիւնների այս ալիքը կարող է վկայել այն մասին, որ նախագահ Սերժ Սարգսյանը նախկին նախագահ Ռոբերտ Բոչարեանի հետ, որը դեռեւս աջակիցներ ունի կառավարութիւնում, իշխանութեան համար պայքարի մէջ է ներգրավուել: Այդ պայքարը կարող է ազդել Հայաստանի գալիք խորհրդարանական ընտրութիւնների վրայ եւ ի վերջոյ իր ազդեցութիւնը թողնել Հայաստանի արտաքին քաղաքականութեան որոշ ուղղութիւններ վրայ, չնայած որ այն չի փոխելու Հայաստանի ընդհանուր ռազմավարական յարաբերութիւններն իր ազդեցիկ հովանաւոր երկրի՝ Ռուսաստանի հետ»,- նշում է յօդուածում:

Յօդուածագիրն այնուհետեւ ընդգծում է, որ քաղաքական վերափոխումները Հայաստանում տեղի են ունենում 2012թ. Մայիսին նախատեսուած խորհրդարանական ընտրութիւնների նախաշեմին: «Պաշտօնանկութիւնների եւ հրաժարականների փուլից քիչ առաջ Բոչարեանը «Մեդիամաքս» գործակալութեան հետ գրոցում այս տարեկան, որ չի բացառում քաղաքական ասպարէզ վերադառնալու հնարաւորութիւնը: Վերափոխումների ենթակուած պաշտօնեաներից շատերը, պտտուող լուրերի համաձայն, կապեր ունեն Բոչարեանի հետ, այնպէս որ չի բացառուում, որ Սարգսյանն այդ վերադասարկումներն իրականացրեց՝ փորձելով ընտրութիւններից առաջ

կառավարութեան ներսում սահմանափակել Բոչարեանի աջակցութեան յենարանը»,- յաւելում է յօդուածագիրը:

«Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները սովորաբար պլանային են ծառայում նախագահական ընտրութիւնների համար, եւ Սարգսյանը ցանկանում է պահպանել իր մեծամասնութիւնը խորհրդարանում: Սարգսյանի Հանրապետական կուսակցութիւնը զբաղեցնում է պատգամաւորական 131 աթոռից 64-ը եւ կողմնակի է կազմում Հայաստանի Բարգաւաճ կուսակցութեան հետ, որը 18 տեղ ունի խորհրդարանում: Ամէն դէպքում Բարգաւաճ Հայաստանի առաջնորդ, հարուստ գործարար Գաբրիլ Մառուկեանը, համարում է, որ մօտ է Բոչարեանի հետ: Եթէ Մառուկեանը որոշի լքել կողմնակի, ապա Սարգսյանն այլեւս մեծամասնութիւն չի ունենայ խորհրդարանում, ինչն էլ կը հեշտացնի Բոչարեանի վերադարձը քաղաքական ասպարէզ, ինչպէս նաեւ յաջորդ նախագահական ընտրութիւններում իշխանութեան համար պայքարը»:

«Անկախ Սարգսյանի եւ Բոչարեանի միջեւ քաղաքական պայքարի ելքից, Հայաստանի քաղաքականութեան ասպեկտներից մէկը՝ Երեւանի յարաբերութիւնները Մոսկուայի հետ, փոփոխութեան չի ենթարկուի: Ռուսաստանի հետ դաշինքը Հայաստանի համար խիստ անհրաժեշտ է, եւ Մոսկուայի քայլերն է ձեռնարկել՝ Ռուսաստանից Հայաստանի կախուածութիւնն ապահովելու համար»,- գրում է յօդուածագիրն ու յաւելում, որ Հայաստանի վրայ իր ազդեցութիւնն է թողնելու Մոսկուայի կողմից ստեղծուող Եւրասիական միութիւնը, ինչն էլ կարող է անդրադառնալ հարեւանների հետ Հայաստանի յարաբերութիւնների վրայ:

«Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններին նախորդող ամիսներին շատ բան կարող է փոխուել, սակայն վերադասարկումների նշանակութիւնն ու ազդային քաղաքականութեան մէջ Բոչարեանի հնարաւոր դերը կարեւոր դեր են խաղալու Հայաստանում քաղաքական ուժերի հետագայ վերադասարկումը որոշելու հարցում»,- նշում է յօդուածում:

«ՅԱՅԱՍՏԱՆ» ԶԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆ

Շաբաթական էջ 1-էն

Թելեթոնի յայտագրին մասնակցելու համար Լոս Անճելըս ժամանած էին Լեոնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեան եւ Արցախի Թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան: Հայաստանէն եւ սփիւռքէն բազմաթիւ հաղորդավարներ եւ արուեստագէտներ մասնակցեցան յայտագրին: Ազգային, քաղաքական, կրօնական, բարեսիրական եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ հանդէս եկան կոչելով ու խրախուսեցին ժողովուրդին՝ իրենց մասնակցութիւնը բերելու այս տարուայ թելեթոնին:

Լոս Անճելըսի մէջ գործող հայկական գրեթէ բոլոր վարժարաններու ուսանողական խումբերը ներկայացան հեռարձակման

սթիւտիոն, միասին բերելով տարուայ ընթացքին իրենց հանգանակած գումարները:

Հանգանակուած գումարը իր մէջ կ'ընդգրկէ ոչ միայն օրուայ ընթացքին կատարուած նուիրատուութիւնները, այլեւ՝ Հայաստանի եւ սփիւռքի տարբեր համայնքներուն կողմէ ամբողջ տարուայ ընթացքին իրականացուած դրամահաւաքները՝ հեռախօսամարաթոններու, ռատիոթոններու, ճաշկերոյթներու, բարեգործական համերգներու, ցուցահանդէսներու, փոստային նուիրատուութիւններու եւ հեռախօսային SMS հաղորդագրութիւններու միջոցաւ:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոցի ընթացքին, Հիմնադրամի Երեւանի գրասենեակի պատասխանատուներէն Յասմիկ Գրիգորեան յայտնած է. - «Անցեալ

ՕՐՅԱՆ ՔԵՄԱԼ ՉԵՆԿԻՉ. ԵՍ ԱՅԼ ՎԱՐԿԱԾ ՈՒՆԻՄ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԱՍԻՆ

NEWS.am-ը որոշակի կրճատումներով կը ներկայացնէ Օրհան Քեմալ Չենկիչի յօդուածը՝ հրատարակուած թրքական «Hürriyet Daily News and Economic Review» պարբերականին մէջ:

Այս յօդուածը կը գրեմ Ֆրանսայի ճանապարհին: Այն հանդիպումները, որ ես կ'ունենամ Ֆրանսայի մէջ ցոյց կու տան, որ Եւրոպայի հետաքրքրութիւնը թուրքիոյ նկատմամբ աճած է: Ես հրաւիրուած եմ թուրքիոյ վերաբերող հանդիպումներու համար ի Սթրազպուրկ: Սթրազպուրկի համալսարանին մէջ կայանալիք առաջին հանդիպումը նուիրուած է թուրքիոյ ազգային փոքրամասնութիւններու խնդիրներուն: Միւս երկու հանդիպումները մտածելու դուռ կը բանան: Եւրոպայի խորհուրդի համապատասխան գերատեսչութիւններուն մօտ, փակ նիստերու քննարկումներու թեմաները կ'ըլլան՝ »Թուրքիոյ վերջին զարգացումները« եւ »Մարդու իրաւունքներու պաշտպանութեան ակտիւիստներու վիճակը թուրքիոյ մէջ«:

Միայն երկու երկիրներ կը քննարկուին »Մարդու իրաւունքներու պաշտպանութեան ակտիւիստներու վիճակը« թեմայով: Այդ երկիրներն են թուրքիան ու Ռուսաստանը: Ես կ'ենթադրեմ, որ հանդիպումներու բովանդակութեան մասին գրելու հնարաւորութիւն չեմ ունենար, սակայն այն փաստը, որ թուրքիան քննարկման է դրուած Ռուսաստանի հետ՝ արդէն շատ բան կ'ըսէ: Լրագրողներ Ահմետ Շիքի եւ Նետիմ Շեների ձեռքարկութիւններէն ետք, որոշակի նախազգուշացումներ ստացուեցան Եւրոխորհուրդէն:

Միջազգային հանդիպումներուն, ես լուրջ խառնաշփոթ կը տեսնեմ՝ թուրքիոյ մասին պատկերացումներուն մէջ: Եւրոպացի եւ ամերիկացի դիտորդները երկու տարբեր խումբերէն կը լսեն երկու տարբեր պատմութիւններ թուրքիոյ մասին: Պատմութիւններէն մէկը զարգացած ժողովրդավարութեան մասին է, միւս պատմութիւնը կը վերաբերի քաղաքացիական բռնատիրութեան: Ես այլ վարկած ունիմ թուրքիոյ մասին: Մի քանի հանդիպումներուն ես կը փորձեմ բացատրել այդ վարկածը՝ ներկայացնելով թուրքիոյ մէկ օրուայ պատմութիւնը: Այս տարուայ Ապրիլ 24-ին տեղի ունեցած իրադարձութիւնները թուրքիոյ իրական լուսանկարն են իմ աչքին:

Երկու իրադարձութիւնները թուրքիոյ մէջ տեղի ունեցան նոյն



օրը: Երբ Կարսի մէջ, ապամոնթափուեցաւ Մարդկութեան արձանը, մենք յարգանքի տուրք կը մատուցէինք 1915-ի Ապրիլ 24-ին հայ մտաւորականութեան զոհուած ներկայացուցիչներու յիշատակին: Այդ ողբերգական իրադարձութիւնները յիշելու համար, ես մի քանի մարդկանց հետ Անգարայի Սաքարիա հրատարակչի հիմնադրամիջոցները կազմակերպուել էին նաեւ Մտամպուլի, Իզմիրի, Տիարպէքիի եւ Պոտրումի մէջ:

Իմ կարծիքով, Սաքարիայի հրատարակչի տեսարանը գերիշապաշտական էր: Ոստիկանութիւնը մեզ կը պաշտպանէր հակացուցարարներէն: 5, 10 տարի առաջ այդպիսի տեսարան հնարաւոր չէր պատկերացնել:

Սակայն Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորումը խորհրդանշող Մարդկութեան արձանի ոչնչացումը վարչապետ էրտողանի անհանդուրժողականութեան վառ արտայայտութիւնն էր:

Այն փաստը, որ այդ երկու իրադարձութիւնները միաժամանակ տեղի կ'ունենան թուրքիոյ մէջ, ցոյց կու տայ, որ »քաղաքացիական բռնատիրութեամբ« եւ »զարգացած ժողովրդավարութեամբ« միայն հնարաւոր կ'է նկարագրել թուրքիոյ այսօրուայ իրավիճակը: Մենք կ'ընթանանք փարատքաւ երթուղիով: Միայն կառավարութեան մտադրութիւններով հնարաւոր չ'ըլլար կանխատեսել, թէ մենք ո՞ր ուղղութեամբ ենք ընթանալու: Անհրաժեշտ է ընդդիմութիւն, որ կը քննադատէ կառավարութեան սխալ գործողութիւնները եւ դրուատանքի խօսքեր կ'ըսէ ճիշդ քայլերու համար: Այդ համապատկերին մէջ, մեծ առաքելութիւն ունին լրատուամիջոցները: Յաւօք, թուրքական լրատուամիջոցները »քաղաքացիական բռնատիրութեան« եւ »զարգացած ժողովրդավարութեան« ճամբարներու գերին են եւ չեն կարող խաղալ առաջնորդող ու խրախուսող դեր:

2010-ին հանգանակուած էր մօտ 21 միլիոն դուլար: Ըստ Յասմիկ Գրիգորեանի, այս տարուայ արդիւնքն մէջ ներառուած չէ, ամէն տարի Մոսկուայի մէջ աւանդական ճաշկերոյթի ընթացքին հաւաքուող գումարը: «Եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ ընդհանուր արդիւնքում ներառուած չէ ճաշկերոյթի արդիւնքը, ապա կարող ենք արձանագրել, որ այս նախնական արդիւնքը 2 միլիոնով գերազանցում է նախորդ հեռուստամարաթոնի արդիւնքը», - այս առնչութեամբ պարզաբանած է Յասմիկ Գրիգորեան:

ՆՈՅԵՄԲԵՐ 29՝ ԱՆՏԵՍՈՒԿԹ ԹՈՒՎԿԱՆԸ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Մայիս 28: Նոյեմբեր 29: Սեպտեմբեր 21:

Հայաստանի երեք հանապետութիւնները բնորոշող թուականներ: Առաջինը երկու տարի հազիւ ապրած, երկրորդը եօթանասունմէկ տարեկանին մահացած, եւ երրորդը դէպի ապագայ նայող քսան տարեկան երիտասարդ դարձած:

Առաջինը Արեւմուտքին նայեցաւ եւ յուսախափ դարձաւ:

Երկրորդը Արեւելքին գիրկը ինկաւ, գրկանք ճանչնալով ապահով ապրեցաւ:

Երրորդը՝ երկրորդէն մնացած «բերքով եւ բարքով» ծնունդ առաւ:

Դարաւոր ստրկութենէ ետք, եւ մօտ հարիւրամեայ պետական կեանք ճանչնալէ ետք, անկասկած որ ամէն հայ ուրախութեամբ եւ հպարտութեամբ կ'ընկալէ այսօր իր ազատ եւ անկախ պետականութիւն ունենալը: Ազգերու ընտանիքին մէջ, հայը այսօր նստած է որպէս հաւասար անդամ միջազգային ատենաներու եւ կազմակերպութիւններու մէջ: Մեր պետական կառուցի ներկայացուցիչները աշխարհի ամէն կողմ իրենց ներկայութեամբ հայ անհատի արժանապատուութիւնը կը վերականգնեն ու կը վերարժեւորեն:

Մայիս 28-ով հիմնուած մեր Առաջին հանրապետութիւնը մեզի դուրս հանեց մեր հազարամեայ ստրկութենէն, բայց ան պարագաներու բերումով եղաւ «գրկուած եւ զարկուած» հայրենիք: Արդար է հոս ըսել, թէ եթէ չըլլար նորանկախ մեր Ա. հանրապետութիւնը, յեղափոխութիւններով բռնկած մեր հայրենիքի շրջապատը պիտի կուլ տար մեր ազգային պետականութիւն ունենալու յոյսերն ու երազները:

Արդար է ըսել նաեւ, թէ Նոյեմբեր 29-ով հիմնուած մեր Երկրորդ հանրապետութիւնը պահեց եւ պահպանեց Առաջին հանրապետութեան փոխանցուած մեր պետական սահմանները, թէեւ կրճատուած՝ սակայն գոնէ երաշխաւորուած Ռուս յեղափոխութեամբ, որ ներքին դիրքը ապահովելու համար պարտաւոր եղաւ Արեւմուտքի կողմէ վերականգնած Քէմալական թուրքիան գոհացնելու:

Եթէ մեր Առաջին հանրապետութիւնը ծնաւ որպէս արդիւնք Հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարին, իր խաչատուր Աբովեանով, Բաֆֆիով, Խրիմեան Հայրիկով, Հնչակով, Դաշնակով եւ Ռամկավարով, ապա, կարելի է ըսել որ մեր Երկրորդ Հանրապետութիւնը ծնաւ որպէս արդիւնք, Կովկասեան տարածքաշրջանի մէջ Ռուս Հոկտեմբերեան



Յեղափոխութեամբ հմայուած Հայ մարդասէր, ընկերասէր եւ յեղափոխական տարրերու կողմէ որ Արեւմուտքի շահահինդիր քաղաքականութենէն դառնացած, իրենց ճակատագիրը կապել ուզեցին, «բանուորի եւ գիւղացիի» հանրապետութիւն որպէս հռչակուած Պրոլետարիական Սովետ Ռուս հանրապետութեան հետ, որ լաւագոյն դաշնակիցը կարելի էր նկատել այն ատենուայ մեր անիրաւուած աղքատ եւ չքաւոր ժողովուրդին, Հայաստանի մէջ:

Հիմա որ այլեւս չկան Առաջին հանրապետութեան իրաւագրկուած եւ պաշտօնագրուրկ արեւելահայ ղեկավարները սփիւռքի մէջ, որ գէթ մինջեւ 1965 թուական, աքտորէն վերապրած մեր խեղճուկրակ արեւմտահայ սփիւռքահայ ժողովուրդին կեանքը տնօրինեցին, եւ պաշտօնի վրայ չկան պաղպատերազմի շրջանին (1947-1990) իտէալապաշտ պայքարի սերմնացանները «պոլշեւիք կամ ոչ պոլշեւիք» որ եղբայր եղբօր դէմ հանեցին, կ'արժէ իրապաշտօրէն նայիլ եւ արժեւորել քսաներորդ դարու մեր երեք հանրապետութիւնները:

Մեր Առաջին հանրապետութիւնը մեզի տուաւ պետականութիւն որ կը ցանկար Ամերիկեան հոգատարութիւն: Գուցէ լաւ կ'ըլլար եթէ Ամերիկեան Գոնկրէսը չմերժեր հոգատարութիւնը: Բայց ակնարկ մը նետելով Միջին Արեւելքի մէջ Ֆրանսական եւ Անգլիական հոգատարութեան տակ դրուած Արաբական նորաստեղծ պետութիւններուն, ինչպիսի էր պարագան Մայիս 28-ով ստեղծուած հայկական նորաստեղծ պետութեան, կայսերապաշտութեան գիրկին մէջ ինկող մանուկ-պետութիւնները հաճելի կեանք չունեցան: Ռուսական Պոլշեւիզմի Յեղափոխութեան հմայքին հետեւող իտէալապաշտ տարրեր Կովկասի մէջ, Կայսերապաշտ Արեւմուտքին նայող եւ անկէ օգնութիւն սպասող մեր իշխանութիւնը վար առին, եւ Սովետական համամարդկային (International) չափանիշներով սոսկորուած, Սովետական մեծ ընտանիքին միանալով, հանգիստ կեանք եթէ չունե-

ցան, գոնէ հանգիստ եւ ապահովքուն ունեցան: Պահ մը երեւակայնք, Համաշխարհային Երկրորդ Պատերազմին, երկու տասնամեակ առաջ Գերմանիոյ դաշնակից թուրքիան՝ ինչէր պիտի չընէր մեր պետականութեան, եթէ Հայաստանը ծուարած չըլլար Սովետական հզօր բանակի ապահովութեան տակ:

Եւ տակաւին ամէն մէկ Ստալինեան անգութ եւ տգէտ բռնութիւններուն դիմաց, որքան եւ որքան գիտնականներ, արուեստագէտներ եւ իմաստուն լուծութեամբ գործող ազգային գործիչներ, որոնք ամէն դժուարութիւններ չաղթահարելով, պատրաստեցին այն ազգասէր սերունդը որ Ղարաբաղ ազատագրեց:

Հայաստանի Երկրորդ Հանրապետութիւնը, Նոյեմբեր 29-ով ծնունդ առած հանրապետութիւնը, Սովետական Հայաստանը, մեր հայրենիքի հայ մարդուն մէջ մշակեց արուեստի, առողջ ֆիզիքի եւ գիտութեան սէրը, եւ նիւթական մրցակցութիւնը արգիլելով, գայլմարդոց մէջ արթնցուց անօրինութեամբ շահաբերելու հիւանդագին երեւոյթը: Ամէն մէկ գայլ-մարդու դիմաց սակայն քանի՜ եւ քանի՜ մարդասէր, ընկերասէր եւ ազգասէր հայեր հայրենիք կերտելու սրբազան գործ տարին: Համբոյր եւ հազար համբոյր անոնց:

Եւ երբ փլաւ Սովետական Միութիւնը եւ անոր հետ հայուն Երկրորդ Հանրապետութիւնը, անոր մէջ պատրաստուած սերունդը, երկրաշարժի (1988) եւ կայսրութեան անկումի (1990) փլատակներէն

դուրս գալով հիմնեց մեր Սեպտեմբեր 21-ի Երրորդ Հանրապետութիւնը:

Հայուն Երրորդ եւ ներկայ պետականութիւնը, բացարձակ ազգայնական չափանիշով, կարելի է գայն նկատել լաւագոյնը մեր ընդհանուր պատմութեան մէջ: Երբեւիցէ այլքան անկախ եւ ազատ եղած չէ մեր հայրենիքը: Այսքան զօրաւոր ազգային բանակ ունեցած չէ հայը, ինչպէս նաեւ ան ունեցած չէ հայրենիքի թիկունք կանգնող այսքան միասնակամ եւ զօրաւոր սփիւռք:

Յաւալի է սակայն, որ արտագաղթի երեւոյթով լեցուն Երրորդ Հանրապետութեան ընթացքը հակառակ կ'ընթանայ Երկրորդ Հանրապետութեան Ներգաղթով մարդու զօրացնող երեւոյթին: Կեանքի կենսամակարդակը հասած է ցաւալի վիճակի մը որ անկարելի է մեղադրել արտագաղթող Հայաստանցիները:

Վերջապէս, Նոյեմբերեան ամսու այս աւարտին, ուզեցի յիշել Նոյեմբեր 29-ի անտեսուած թուականը, եւ ըսել թէ Մայիս 28-ի եւ Սեպտեմբեր 21-ի առաքինութիւններուն կողքին պէտք է յիշել նաեւ Նոյեմբեր 29-ի կողմէ հայուն տրուած օգուտներն ու առաքինութիւնները:

Եթէ եօթանասուն տարուէ ետք վերարժեւորուեցաւ Մայիս 28-ն որպէս մեր առաջին անկախութեան թուականը, վստահ եմ որ օր մըն ալ կը վերարժեւորուի Նոյեմբեր 29-ն, որպէս մեր պետականութեան պահպանման թուականը:

Հ.Բ.Ը.Մ. ԱՐՄԱԿԱՆԳ ԹԱՏԵՐԱԽՈՒՄ

ՍԷՐ ԵՒ ԾԻԾԱՂ

Կատակեպոթիմ 2 արաթով

Հեղինակ **ԵՐՈՒՆԳ ՕՏԵԱՆ**
Բնագիրը **ԳՐԻԳՈՐ ՍԱԹՄԱՆԵԱՆ**

Շաբաթ, Նոյեմբեր 5, 19, 26
ժամը 8:00-ին

Կիրակի, Նոյեմբեր 6, 13, 20, 27
ժամը 5:00-ին

Շաբաթ, Դեկտեմբեր 3, 10
ժամը 8:00-ին

Կիրակի, Դեկտեմբեր 4, 11
ժամը 5:00-ին

Մուտքի տուր՝ \$20

ԴԵՐԱՍԱՏՐՆԵՐ՝
ԳՐԻԳՈՐ ՍԱԹՄԱՆԵԱՆ, ԱԼԵՅՍ ԽՈՐՀԻՏԵԱՆ, ՈՌԻԲԵ ՅԱՐԱՆՏԱՅԵԱՆ, ԱՐԻ ԼՊԱՐԻՏԵԱՆ, ԱՐԻ ՍԱՍՈՒԼԵԱՆ, ՆԱՐԻԵ ՄԱԳԵԱՆ, ԱՐԻ ԴԱԼՄԱՆԵԱՆ, ԱՐԱՍ ՄՈՒՐԱԳՅԱՆ, ՎԱԳՕ ՆԱՍԻ, ԳՐԻԳՈՐ ՄՈՒՈՆԵԱՆ, ԹԱԼԻ ԳԱՄԱՍՐԱՆԵԱՆ, ԱԼԻՆ ԽԱՆՅԵԱՆ, ՈՍԵՒ ԲՈՐՍԵԴԵԱՆ, ՆԱՅԻՐԻ ՆՄԻՐՅԵԱՆ, ԱԼԻՆ ԳԱՐՈՆԵԱՆ, ԱՍՏԳԻԿ ՄԻՆԱՆԵԱՆ

Հ.Բ.Ը.Մ. ՓԱՍՏԻԼԱՅԻ ԿԵՂՈՆԻՆ ՄԷՁ
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

Տոմարու համար դիմել Հ.Բ.Ը. Միութեան Գրասենյակը
(626) 794-7942 կամ (626) 710-3805
itsmyseat.com
www.agbuca.org

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծանասակներու և մանուկներու Քայքայութեան Բաշխօրհարքի բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, բազային և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի հետեանցով պատասեած
վնասուածքներու բուժում:
Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԴԵԿՏԵՄԲԵՐ 4-Ի ԵՆՈՅԹԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԲՈՒԷ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆԸ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 68ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԶԱՆԴԻՍԱԲՈՐ ՆՇՈՒՄԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ՄԷՋ



Լիբանանի անկախութեան 68րդ տարեդարձը այս տարի բացառիկ շուքով նշուեցաւ Պէյրութի Հիլթոն Հիլթոն հիւրանոցին մէջ: Ծուրջ հինգ հարիւր հիւրերու մէջ կը նշմարուէին պետական, դիւանագիտական եւ քաղաքական տարբեր հոսանքներու ներկայացուցիչ-

ուղղեց ներկաներուն առաւել եւս միանան եւ զօրացնեն լիբանանցիներու գաղութային կեանքը եւ գործօն մասնակցութիւն ունենան ԱՄՆի պետական կառույցներէն ներս: Իր ելոյթին մէջ Լոս Անճելըսի մօտ Լիբանանի աւագ հիւպատոսուհի Տիկ. Մատոնա Աուն-Լազար,



ներ: Նչպէս նաեւ Ս.Դ.Հ. Հնչակեան կուսակցութեան Արեւմտեան Ամբրիկայի Վարիչ Մարմնի պատուիրակութիւն մը:

Տեղույս Լիբանանի աւագ հիւպատոսութեան կողմէ կազմակերպուած սոյն աւանդական ընդունելութեան պատշոնական յայտագրի գործադրութիւնը սկսաւ Լիբանանի եւ ԱՄՆի քայլերգներով, կատարողութեամբ արուեստագիտուհի Ծովիկի: Այս առիթով ելոյթ ունեցաւ դատաւոր Ճէյմս Քաստօ եւ կոչ


ողջունել էր հրաւիրեալները անկախութեան տօնին առթիւ ներկաներուն փոխանցեց Լիբանանի հանրապետութեան նախագահ՝ Զօրավար Միշէլ Սլէյմանի շնորհաւորութիւնները: Ան մասնաւորաբար շեշտեց որ անկախութիւնն իրականութիւն դարձաւ մեր ժողովուրդի միասնականութեան շնորհիւ եւ ներկայիս աւելի քան երբեք անհրաժեշտ է այդ միասնականութիւնը թէ ներքին եւ թէ արտաքին ճակատներու վրայ:

ԳԱԶԻՐԵԻ ԻՐԱՐԱՆՅՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ ՎՆԱՍՈՒԱԾ Է «ՋԱՅԱԿԻՐ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐԸ

Եգիպտոսի Ներքին Գործոց Նախարարութեան յարող Մանսուր փողոցի վրայ ապրող, «Ջահիր» երկշաբաթաթերթի խմբագիրը Աւետիս Մովսէսեան վնասուած է վերջերս տեղի ունեցած նախընտրական իրարանցումներուն:

Խմբագրի ոտքը երեք տեղերէ վիրաւորուած է երբ իր սեփական տան պատշգամբ ելած է՝ «չենթադրելով, որ կրնայ այդքան հեռուէն վիրաւորուիլ»: «Ազգրիս ետեւէն 2 տեղ եւ առջեւէն ուստի նէ փամփուշտ միւրճուած է եւ 5 սանթիմէթր ալ պատուուած ք ունիմ»- կը պատմէ Մովսէսեան իր հետ կատարուած դէպքի մանրամասնութիւնները, որ տեղի ունեցած է Նոյեմբեր 21ի գիշերը:

Քարեքարտաբար տեղացի ատամնաբույժ դրացի մը յաջողած է արիւնը կանգնեցնել եւ առաջին օգնութիւն ցոյց տալ, սակայն առաջին օրերուն անկարգութիւններու



եւ բազմութեան պատճառով անհնար եղած է հիւանդանոց երթալ: Երեք օր ետք միայն Մովսէսեան յաջողած է տունէն դուրս ելլել ու հիւանդանոց երթալ, ուր բժիշկը վէրքը մշակած է: (Arma veni.com)

ԵԳԻՊՏՈՍԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ ԽՈՒՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ԷԱՊԵՍ ՉԵՆ ԱԶԴԱԾ» ԶԱՅ ԶԱՄԱՅՆՔԻՆ ՎՐԱՅ

Եգիպտոսի մէջ Նոյեմբեր 19-25 տեղի ունեցած խուովութիւնները «հապէս չեն ազդած հայ համայնքին վրայ», բաղդատմամբ անցեալ Յունուարին տեղի ունեցած իրարանցումներուն, - կը վստահեցնեն Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայ հոգեւոր առաջնորդները:

«Գահիրէի Առաջնորդարանը լուրջ հազանգ չէ ստացած Մանսուր եւ Մուհամետ Մահմուտ փողոցներուն վրայ բնակող հայ ընտանիքներէն»- կ'ըսէ Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Աշոտ Ս. Եպիսկոպոս Մնացականեան: Մանսուր փողոցը կ'առաջնորդէ դէպի Ներքին Գործոց Նախարարութիւն, ուր արիւնոտ բախումներ տեղի ունեցած են ոստիկանական զինուորական ծառայողներու եւ ցուցարարներու միջեւ:

Առաջնորդ Հայրը կը նշէ, թէ «միայն դէպքի վայրերն են, որոնք անհանգիստ էին, սակայն քաղաքին միւս կողմերը կեանքը կ'ընթանար սովորականին պէս»: Ան կը տեղեկացնէ նաեւ, որ բոլոր օրերուն Ազգային Առաջնորդարանը աշխատած է ընդունուած աշխատանքային ժամերուն, միայն Նոյեմբեր

26ին, պաշտօնական արձակուրդ ունեցած է՝ իսլամական Հիճրի տարեգլուխին առիթով:

Իսկ Աղեքսանդրիոյ Առաջնորդական Փոխանորդ Տէր Գրիգոր Քահանայ Մուրատեան կը հաւաստիացնէ, որ Աղեքսանդրիոյ հայ «համայնքի բոլոր անդամները անվնաս են», եւ որ «Ս. Պողոս-Պետրոս եկեղեցւոյ պատարագները եւ ժամերգութիւնները մատուցուած են առանց ընդհատումներու»: Ըստ Տէր Հօր, ցոյցերը կը կատարուէին հեռու թաղամասերուն մէջ, եւ թէ «իրարանցում, անհանգստութիւն չկար»:

Խուովութիւններուն պատճառով Գալուստեան Ազգային Վարժարանը ցարդ փակ կը մնայ, Գահիրէի Ազգային Առաջնորդարանի պատկան՝ «Արաք» Երգչախումբի համերգը եւ Գահիրէի Հայ Կարիքի խաչի աւանդական փոքր «պագար»ը, որոնք նախատեսուած էին Նոյեմբեր 26ին, յետաձգուած են անորոշ թուականով: Յունուարի խուովութիւններուն ընթացքին, հայերու պատկան երեք խանութ թալանուած էր: (Arma veni.com)

www.massisweekly.com
updated every Friday

Authorized Broker **SERVING SINCE 1975**

blue 

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՀԱԼԵՊ

ԿԻՆԿԵԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ 90-ԱՄԵԱԿ



ԱՆԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Կիլիկեան Կրթական Հաստատութիւնը 90 տարուայ ժամանակաշրջան մը յանձնեց անցեալին: Պանծալի ու փառաւոր անցեալ մը ունեցող այս սրբազան կրթօճախը իր պատմութեան էջերուն վրայ ոսկետառերով արձանագրեց Մշակութային ու Կրթական եւ ուսումնական փառաւոր գործունէութիւն:

Արեւմտեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի հովանաւորութեամբ վերջերս լոյս տեսան երեք հրատարակութիւններ որոնց ընծայումն ու շնորհանդէսը տեղի պիտի ունենան Առաջնորդարանի նորաշէն Մայր Տաճարի Զօրացեան Թանգարանին մէջ Զորեքշաբթի Դեկտեմբեր 14-ի երեկոյեան ժամը 7-ին: Իւրաքանչիւր գիրք պիտի ներկայացուի ի ներկայութեան հեղինակներուն՝ նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին: Նոր հրատարակութիւններն են.

(Ա) ՇԱՐԱԿՆՈՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ, երրորդ տպագրութիւն, հեղինակութեամբ Գերշ. Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Թապաղեանի:

Սոյն մեծածաւալ, ընտիր ու վերաքննեալ թարգմանութիւնը, 1014 էջերէ բաղկացած, կ'ընդգրկէ



ՇԱՐԱԿՆՈՅԻ գրաբար բնագիրն ու հանդիպակաց էջին՝ անոր աշխարհաբար թարգմանութիւնը, տուն առ տուն, վաշխուչ տառատեսակներով եւ համաչափ էջադրութեամբ: Գործը կը ներկայացնէ ՇԱՐԱԿՆՈՅԻ իր լրիւ բովանդակութեամբ եւ


Ծաւալով անկրկնելի այս հատորը կը կրէ հետեւեալ տիտղոսաթերթը.

«Շարական Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ՝ յօրինուած Ս. Թարգմանիչներու, Ս. Հայրապետներու եւ Վարդապետներու կողմէ»: Սոյն հրատարակութեան մեկենասներն են ութ բարերար ազգայիններ՝ հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին որուն Օրհնութեան Գիրով կը բացուի հատորը՝ «Լեցնելու համար մեր հոգիներուն բացուած ծալքերը» խորագրով: Կը յաջորդէ «Ուրախ Լուր» սրտի խօսքը՝ ուսուցիչ եւ գիրքերու հեղինակ Կարօ Պետրոսեանէ, «Շարականներու Աստուածաբանութիւնը» Դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեանէ, ինչպէս նաեւ գոյգ մը »Վկայութիւններ«՝ Փրոֆ. Գրիգոր Փիտէճեանի եւ Միհրան Քիւրտոյի կողմէ:

Աշխարհաբար այս նորագոյն ՇԱՐԱԿՆՈՅԸ պիտի ներկայացնէ Դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան:

(Բ) ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐ, Գիրք Բ, հեղինակութեամբ Դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեանի որպէս լրացուցիչ հատորը առաջինին՝ հրատարակուած տարի մը առաջ: Սոյն 265 էջ հատորը կը բովանդակէ անցեալ դարու Հայ Եկեղեցւոյ երախտարժան բարձրաստիճան հոգեւորականներ որոնց կեանքն ու վաստակը որպէս յարացոյց եւ օրինակ կը ներկայացուի ներկայ սերունդի հայ հոգեւորականութեան:

Գիրքը կը բաղկանայ չորս բաժիններէ, 12 ԸՆՏՐԱՆԻ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐԷ՛, մասնաւորաբար անոնց գրական վաստակը յայտնաբերելով: Ապա՝ ՀԱԻԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿՆԵՐՈՒ, Նիկիոյ եւ Տաթեւացիի, բացատրական թարգմանութիւնը: ՅՈՒՅԵԼԻՆԱԿԱՆ բաժինն մէջ հեղինակը ընդգրկած է



յարակից բոլոր ցանկերու յաւելումներով:

Եփրեմ Արքեպիսկոպոսի սոյն տքնաջան աշխատութիւնը իր տեսակին մէջ բացառիկ երկ մըն է ուր թարգմանիչ հեղինակը հանդէս կուգայ խղճամիտ եւ ճշգրիտ թարգմանութեամբ, ընթերցողին հասկնալի դարձնելով մեր ոսկեղնիկ գրաբարին բոլոր ներքին ծալքերը, բառամթերքը, գրաբարին յատուկ ոճն ու քերականական կառուցը:

Ամենայն Հայոց Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի վերջին շրջանի շինարար աշխատանքը՝ Սեւանի վազգէնեան Հոգեւոր ձեմարանի հիմնումը, Դպրանոցի նորաշէն համալիրի կառուցումը, եւ Հայրորդեաց Տուններու հաստատումը: Գիրքը ձօնուած է Նորին Սրբութեան իր ծննդեան վաթսուամեակի երջանիկ առիթով:


Շար.ք էջ 18

ՄՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱՔՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՐԱՆԴ ԱՃԵՄԵԱՆ ԱԿՆԱՐԿ ԱՍԵՐԻԿԱՅԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ 2011

Ներկայ հրատարակութիւնը, «Ակնարկ Ամերիկահայ Վարժարաններու Պատմութեան», կը կազմէ Հրանդ Աճէմեանի տասներորդ գործը, որ լոյս տեսած է 2011-ին, Լոս Անճելըս «Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութեան» աջակցութեամբ:

Հրանդ Աճէմեան իր համանուն աշխատասիրութիւնը նշմարով մը սկսելով կը բացատրէ Ամերիկայի մէջ ամերիկահայ ամէնօրեայ դպրոցներու բացման ուշացումը: Գաղութը, հայապահպանման նպատակներով, աշխարհով մէկ ցրուած գաղթօճախներէ ներս հայկական դպրոցներ նորոգելով, բանալով, մշակութային մարզական, առողջապահական շարժումներուն գորակցելով, անվերջ նիւթապէս օժանդակելով եւ ունանողական կրթաթոշակներ հաստատելով հանդերձ՝ չէ հաւատացած Ամերիկայի մէջ ամէնօրեայ հայ վարժարաններու ազգապահպանման օգտակատարութեան, զոր գտած է հայ եկեղեցւոյ մէջ, ինչ որ կը բացատրէ հարիւրաւոր եկեղեցիներու կառուցումը ամերիկահայ գաղթօճախներէն ներս:

«Ակնարկ Ամերիկահայ Վարժարաններու Պատմութեան», հատորը պատմութիւնն է անհատ նուիրեալներու, որոնց տարած հաւատաւոր, հետեւողական եւ տքնաջան աշխատանքներուն շնորհիւ կարելի դարձած է յաղթահարել բազում խոչնդոտներ եւ 1964-ին հիմնադրել առաջին ամերիկահայ դպրոցը: Ան պատմութիւնն է նաեւ յետագայ տարիներուն աստիճանաբար մէկը միւսին յաջորդող բոլոր հայկական ամէնօրեայ դպրոցներուն: Պատմութիւնն է անոնց վիճակագրական, նիւթա-բարոյական, ուսումնական, հայագիտական,



մասնագիտական եւ ազգային ծառայութեան բնագաւառներէ ներս արձանագրած յաջողութիւններուն, դժուարութիւններուն եւ բացթողումներուն:

Աճէմեան, մեր կրթական հաստատութիւններուն մէջ ձեռք ձգուած արդիւնքներու լոյսին տակ կը կատարէ հարցադրումներ, ինչպէս՝ «ամերիկահայ վարժարանները որքանով կ'արդարացնեն իրենց գոյութիւնը», «հայերէնախօսութեան հարցը ամերիկահայ վարժարաններու մէջ», «ամերիկայութեան յետագայ առաքելութիւնը եւ նման այժմէական հարցեր», որոնք արժանի է, որ մեր կրթական կեանքով մտահոգ կառուցները քննարկման ենթարկեն զանոնք ամենայն բծախնդրութեամբ:

Գնահատելի աշխատասիրութիւն մը, արդարեւ:

ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյլի 380-րդ կայանից

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուղի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքմիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐ «ԴԵԶՅՈՒԼ»

ՀԱՐՄԻԿ ԹԱԿՈՐԵԱՆ

Յիսուսական թուականներին ամերիկեան կառավարութիւնը որոշեց պարսկական գործը արդիակա- նացնել: Այդ նպատակով ամերիկա- ցիք Պարսկաստան ուղարկեցին զի- նուորական եւ շինարարական մաս- նագէտներ, որոնք իրենց կենտրոնը հաստատեցին Թեհրանի շրջանում գտնուող Սուլթանաբադ վայրում: Նրանք էլ իրենց հերթին վարձեցին տեղացի մասնագէտներ, որոնց մէջ էր սողերս գրողը:

Ամերիկացիների առաջին ծրագիրն էր Դեզֆուլ քաղաքի մօտ գէթ օդանավերի կայան ստեղծել: Ծրագրի իրականացման համար պէտք ունէին այդ քաղաքի մօտ անապատի չափերը եւ ուրիշ ման- րամանութիւններ: Հետեւաբար մեզ մօտ 20 հազ ու պարսիկ ինչպէս նաեւ երեք ամերիկացի մասնա- գէտներ, ուղարկեցին Դեզֆուլ: Մենք երկաթուղով գնացինք Անդիմեշք եւ այնտեղից գինուորական բեռ- նատարերով հասանք Դեզֆուլ:

Մի քանի խօսք այդ տարօրի- նակ քաղաքի մասին: Դեզֆուլը գտնուում է իրանի հարաւում, մի չոր եւ տաք անապատի մօտ: Մինչեւ 1950 թուականը Դեզֆուլը ՄԱԿի Համաշխարհային Առողջա- պահական կազմակերպութեան կող- մից հռչակուած էր որպէս «աշ- խարհի ամենակեղտոտ եւ հակա- առողջապահական քաղաքը», հետե- եալ պատճառով: Այդ քաղաքը մեծ մասամբ կառուցուած է ամուր ժայռերի վրայ, որի հետեւանքով կոյուղիներ կառուցելը եղել էր անկարելի: Ահա տեղացի ժողո- վուրդի լուծումը - բոլոր տների գուգարանները կառուցուել էին

տների կտուրներում. հետեւաբար գուգարաններից դուրս եկած աղբը պատերի վրայով հոսում էր դէպի փողոց եւ ապա քաղաքի միջոցով անցնող գետը: Կարելի է երեւակա- յել այդ ձեւի «մաքրութեան» հե- տեւանքները, որոնց շարքին՝ ահա- լոր գարշահոտութիւն, կեղտ, ամէ- նուրեք ճանճեր եւ այլ չարիքներ: Բնակիչների գրեթէ բոլորը վա- րակուած էին տրախոմա աչքի հիւանդութեամբ, եւ հերաթափու- թիւնը սովորական էր:

Բարեբախտաբար թագաւորի կարգադրութեամբ յատուկ խողո- վակներ գետեղուեցին եւ այդ տխուր վիճակը վերացաւ, բայց ճանճերի քանակը շատ չպակսեց:

Ահա մի օրինակ Դեզֆուլում իմ ունեցած փորձառութիւններից: Մի օր, երբ անցնում էի փողոցով, տեսայ մսավաճառի խանութում ինչ որ մի այծի մարմին կախուած է պատից: Ջարմանալին այն էր որ ինձ թուաց թէ մարմինը սեւ մոր- թով էր, բայց երբ մսավաճառը մօտեցաւ դրան, ճանճերի մի մեծ ամպ բարձրացաւ եւ ինձ համար պարզուեց որ դա ոչ թէ այծ էր, այլ ոչխար. ճանճերը նրան ծածկելով այծի տեսք էին տուել:

Այդ քաղաքը յայտնի էր մի մեծ միջատով որը կոչուում էր ջարարէ: Մեզ գուշացրին որ, երբ երեկոյեան դուրսը բակում նստում ենք, ճրագի մօտ չլինենք եւ յատ- կապէս մեր թեւերը ծածկած պա- հենք, որովհետեւ եթէ այդ միջատը դէպի լոյս գալով ընկնի մեր մարմ- նի բաց մասի վրայ, խայթոցը մահացու է: Նոյնպէս մեզ յայտնե- ցին թէ մեր հասած օրը քաղաքա- պետի 18 տարեկան աղջկան այդ միջատը խայթել էր, նրան տեղա-

փոխել են Անդիմեշք՝ բուժելու, բայց անօգուտ, խեղճ աղջիկը մա- հացել է:

Երբ մենք հասանք Դեզֆուլ, դժուարութիւն ունեցանք մեր 23 հոգու համար մի տեղ ճարել. չկար հիւրանոց կամ էլ ուրիշ յարմարու- թիւն: Երկար փնտռելուց յետոյ գտանք մի մեծ տուն՝ ընդարձակ բակով: Տունը գտնուում էր գետի ափին մի բարձրունքի վրայ: Անմի- ջապէս վարձեցինք, բայց մեզ հա- մար հանելուկ էր թէ ինչո՞ւ այդ յարմար շէնքը մեզինից առաջ ոչ ոք չէր վարձել: Խնդիրը շուտով պարզ- ուեց: Տան ուղղակի տակը կար մեռել լուանալու մի հաստատու- թիւն (մորդէշուր խանէ), որը պատ- ճառ էր դարձել որ ոչ ոք չհամար- ձակուի այդ տնում բնակութիւն հաստատելու:

Ի հարկէ մենք այդ հանգա- մանքին ուշադրութիւն չդարձ- րինք եւ տեղաւորուեցինք այդ բնակարանում:

Մենք ամէն օր գնում էինք անապատը՝ չափազրելու: Մեզինից մէկի պարտականութիւնն էր ամէն գիշեր պատրաստել յաջորդ օրուայ ուտելիքն ու խմելու ջուրը: Մի օր էլ որ մեկնեցինք մեր աշխատան- քին, մեզ համար պարզուեց որ այդ անձը, նախորդ գիշեր հարբած լինելու պատճառով, մոռացել է ջրի պատրաստութիւն տեսնելը: Օգոստոս ամիս լինելով, շոգը ան- տանելի էր դառնում: Ջրի կենսա- տու արժէքը այդպիսի ժամանակ է ի յայտ գալիս: Մենք ռատիոյով մեր կենտրոնին յայտնեցինք մեր վիճակը եւ ջուր խնդրեցինք: Նրանք մեզ պատասխանեցին որ մեր ճիփ մեքենան ինչ որ նորոգութեան կարիք ունի. երբ որ պատրաստ լինի, անմիջապէս մեզ ջուր կը հասցնեն:

Մի քանի ժամ ետք, շոգից եւ ծարաւից գործելը անկարելի դար-

ձաւ: Ճարահատ, որոշեցինք խմել գետի ջրից - միեւնոյն գետից, որը անցնում է Դեզֆուլի միջով եւ որի մէջ թափուում է քաղաքի կեղտը: Մենք քաջ գիտակցում էին այդ գետի անմաքուր լինելու իրողու- թեանը, բայց մենք ընտրեցինք չարեաց փոքրագոյնը: Եթէ ջուր չխմէինք, չեմ իմանում մեզ հետ ինչ կը պատահէր:

Բանից դուրս եկաւ որ մեր ամերիկացի մեծերը իրենց հետ ունեն ջուրը մանրէներից գտող մեծ քանակութեամբ դեղահատեր: Նրանք այդ փրկարար դեղահատե- րը լցրեցին իրենց ջրի ամանները եւ խմեցին. մենք խնդրեցինք որ այդ դեղահատերից գէթ մի հատ մեզ տան, բայց նրանք անխղճօրէն մերժեցին:

Շատ չանցած մեր մեքենան հասաւ, իր հետ բերելով ոչ թէ ջուր, այլ շիշերով Pepsi-Cola, որոնք ծածկուած էին մեծ սառույցներով եւ ճանապարհի փոշու հետ խառն- ուելով դարձել էին ցեխ: Բայց, ինչ փոյթ, շիշերի պարտականութիւնը մաքուր եւ սառն էր: Ով ինչքան որ ուզում էր խմեց ազատաբար եւ կշտացաւ:

Ամէնից հետաքրքրականը այն էր որ այդ գիշեր մեր երեք ամե- րիկացիները այնպէս հիւանդացան որ մենք վախեցանք՝ եթէ մի ճար չանենք, երեքն էլ կը մահանան: Ստիպուած, ռատիոյով Թեհրանից օդանաւ ուղեցինք, նրանք էլ անմի- ջապէս մի փոքր գինուորական օդանաւ ուղարկեցին եւ նրանց փոխադրեցին Թեհրանի հիւանդա- նոցը:

Իրօք, գարմանալի էր որ մեր 20 հոգուց, որոնք խմել էին այդ գետի կեղտոտ ջրից եւ դեղահատ չէին օգտագործել, ոչ մէկը չհիւանդացաւ: Թերեւս նախախնամութեան դատալ- ճիւռն էր որ այդպիսով այդ երեք ամերիկացիները պատժուեցին:

ՅԵՌՈՒ ՄԱՅԷՔ ԱՆՐԱԿԱՐՄՈՒԹԵՆԷ

Այսօրուայ մեր ապրած ձեւը անցեալէն աւելի հնարաւոր կը դարձնէ մեր ընկերակիցին հանդէպ անհաւատարմութիւնը: Ոչ թէ միայն արհեստագիտական արդիա- կան միջոցները դիւրացուցած են այդ մէկը, այլ որովհետեւ մեր բոլոր յարաբերութիւններուն մէջ յառաջացած հիմնական փոփոխու- թիւնները նսեմացուցած եւ մրո- տած են ընդունելի եւ անընդունելի վերաբերմունքին միջեւ գտնուող գիծը: Շատ պարագաներու մէջ, մարդիկ արդէն անցած են ուրիշին մանդէպ «զգացում ունենալու» գի- ծը եւ հասունցած են անոր հետ անօրէն կերպով յարաբերելու՝ նոյ- նիսկ առաջ որ իրենք գիտակցած ըլլան այդ հարցին:

Այս հիմնական փոփոխութիւն- ներն են հետեւեալները.

Առաջին, գործատեղիին մէջ նուազ ստորակարգութիւն կայ եւ այսօրուան հաստատութիւնները դրամական մեծ նախաձեռնութիւն- ներու կը դիմեն աշխատանքային խմբակ ստեղծելու համար: Հետե- ւաբար, թերեւս գարմանալի չէ, որ գորաւոր կապեր կը կերտուին, եռամսեայ վաճառքի ցուցանիշնե- րուն մասին խօսակցութիւնները ընդգրկելով նաեւ անհատական սերտ գաղտնիքներ:

Երկրորդ, բարեկամութեան հանդէպ մեր գաղափարը բոլոր ճանաչումներէ դուրս փոփոխու- թիւն կրած է: Մենք ոչ միայն սկսած ենք կապ պահել մեր նախ- կին սիրածին հետ եւ «բարեկամ»

ըլլալ անոր հետ, այլ նաեւ «Ֆէյս- պուք»-ը եւ անոր նման այլ ընկե- րային ցանցեր ամբողջովին վե- րամշակած են բարեկամութիւն բա- ուին բնութագրումը: Անցեալին, բարեկամը այն անձն էր, զոր կը ծանօթացնէիր ընկերակիցիդ եւ ան կարողականօրէն ձեր երկուքը կը հրաւիրէր իր կազմակերպած հա- ւաքոյթին: Այսօր, բարեկամ մը կրնայ պատահական ծանօթութիւն մը ըլլալ. բարեկամի մը բարեկամը կամ բոլորովին օտարական մը, որ մեզի հետ հասարակ յայտարար մը ունի (ինչպէս երաժշտութեան ժանր մը, եւ այլն): Հետեւաբար, երբ մեր ընկերակիցը հարց տայ համացան- ցի վրայ որոշ անձի մը հետ հաղորդակցելու եւ խօսակցելու մեր տրամադրած ժամանակին մասին, մենք պիտի ըսենք, թէ ան «պարզ բարեկամ մըն է»: Բայց արդեօք այդ ի՞նչ կը նշանակէ:

Երրորդ, համացանցի վրայ գտնուող պոռնկագրութիւնը ար- գիլուած ըլլալու սահմանէն անցած է դէպի «չափահասներու գուար- ճութիւն»: Երբ գոյգեր սկսած են քաջալերուիլ բացաչայտ տարրեր օգտագործել՝ իրենց սիրային կեան- քին օժանդակելու, ապա ո՞ւր կը մնայ անվնաս հաճոյքին եւ դաւա- ճանութեան միջեւ սահմանագիծը: Թերեւս հարց չ'ըլլար, երբ կարգ մը անձեր համացանցի վրայ պոռն- կագրական վիտաներ կը դիտեն, բայց ի՞նչ կարելի է ըսել միջնա- բար կատարուած հարցին նկատ- մամբ, երբ կրնաս «խօսիլ» այդ

վիտնոյին մէջի դերակատար ան- ձին հետ եւ ցուցմունքներ տալ անոր: Ինչպէ՞ս կ'ըլլայ եթէ դիմա- ցի անձը արհեստավարժ մէկը չէ, այլ իր կարգին ճանճրացած կին կամ այր մը, որ զբաղում կը փնտռէ: Ջոյգերուն մեծամասնու- թիւնը չի քննարկեր ընդունելի արարքներուն հարցը, մինչեւ որ անոնցմէ մէկը խախտէ ամուսնա- կան կեանքի պայմանները եւ մե- դանչէ, երբ արդէն վնասը հասած կ'ըլլայ:

Այն արգելքը, որ կ'արգիլէր մեզի դաւաճանութիւն կատարելէ, կտրուկ կերպով նուազած է: Անհա- ւատարմութիւնը, ժամանակին, կ'ընդգրկէր գաղտնի ժամադրու- թիւն եւ սիրաբանութիւն (որոնցմէ իւրաքանչիւրը իր կարգին զգու- շաւոր որոշումի կը կարօտէր), սակայն այսօր կարելի է անհաւա- տարիմ ըլլալ համակարգիչին վրայ քանի մը կոճակներ սեղմելով եւ առանց տունէն դուրս ելլելու: Այս- պիսի պզտիկ քայլերով եւ անհա- ւատարմութեան մասին միջին գա- ղափարով, դիւրին է ձեւացնել, որ առեւտրական գծով հին ծանօթի մը հետ գործի վերաբերեալ հան- դիպումը ասպարէզային բնոյթ կը կրէ, մինչ խորքին մէջ տարիներէ ի վեր գիտես, որ ան ցնորական հակում ունի քեզի հանդէպ:

Եթէ տակաւին վստահ չես, թէ արդեօք սահմանագիծը կտրած ես թէ ոչ, կամ եթէ անօրէն կերպով յարաբերելու վտանգին տակ ես, հարց տուր դուն քեզի հետեւեալը. իմ ընկերակիցս ի՞նչ կրնայ մտա- ծել, եթէ լրիւ եւ անկեղծօրէն

բացաչայտում կատարես: Եթէ կը փորձես որոշել ո՞րն է ընդունելին եւ անընդունելին, այդ կրնայ հա- կաները մեզնողական ըլլալ, բայց համացանցի աշխարհին մէջ օրէնք- ները աւելի սերտ կ'ըլլան քան իսկական աշխարհին մէջ: Օրինա- կի համար, պաշտօնակիցի մը եթէ ըսես, որ գեղեցիկ կ'երեւի, այդ կը համարուի անվնաս սիրախաղու- թիւն, որ գրասենեակի կեանքը հանդուրժելի կը դարձնէ: Միե- նոյն նկատողութիւնը՝ գրուած ձե- ւով (բոլոր բնագիրներէ պարպ- ուած վիճակի մէջ) աներեւակա- յելիօրէն կասկածի դուռ կը բանայ:

Ի վերջոյ, երբ արդի յարաբե- րութիւնները աւելի բարդ եւ կնճռոտ դարձած են, մենք աւելի ներող պէտք է դառնանք, երբ մեր ընկերակիցը սայթաքի, որովհետեւ այդ մէկը կրնայ պարզապէս չիմար վերաբերմունք մը ըլլալ:

Հետեւեալ սողերուն մէջ կը ներկայացնենք անօրէն զգացումնե- րու դէմ դուռը փակելու կարգ մը ձեւեր.

* Այն անձը, որուն հանդէպ կը զգաս, թէ զգացումներդ շարժելու սկսած է, անոր հետ կապը կտրէ: Համացանցի վրայ մի որսար գինք եւ ել-նամակով մի փորձեր հետը կապ- ուիլ՝ «պարզապէս կ'ուզեմ որպիսու- թիւնդ հարցնել» ըսելով:

* Մտածումներու եւ յուշերու մէջ մի թաւալիր: Երբ լսես, թէ «ձեր երգը» կու տայ ռատիոկայանէն, փո- խէ գայն եւ չիշատակներու պատկե- րազարդ էջերը հեռացուր միտքէդ:

ՊԱՏԱՆԻՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Ըստ հոգեբանութեան մասնագէտներու, ազատութեան դաստիարակութիւնը եւ անոր յաջորդող մարդկայնական հսկայական պատասխանատուութիւնները կը համարուին պատանիին կեանքին կարեւոր եւ հիմնական հարցերէն, որովհետեւ աստիճանաբար ամբարտուող մշակուցի մը զարգացումէն բաժին մըն է: Հետեւաբար, պատանին կը սորվի ազատութեան հետ վերաբերելու եւ զայն տնօրինելու կերպերը, զայն պահելու եւ զարգացնելու նպատակով:

Հարկ է ուշադրութեամբ դիտարկել ազատութեան եւ անխիտանութեան միջեւ, մասնաւոր մեր արեւելեան միջավայրն ու շրջանակին մէջ: Պատանիին հետ վերաբերումին մէջ գտնուող անցանկալի կէտերէն ամէնէն գլխաւորներն են հետեւեալները:

* Գիտակցութեան ու խոհեմութեան տարիքը տակաւին չհասած թոյլ տալ, որ պատանին ինքնաշարժ վարէ:

* Տունէն դուրս մինչեւ ուշ ժամերը գտնուելու առանց ընտանիքի ունեւ անդամի հսկողութեան:

* Պատանիին համար անձնական բջիջային հեռաձայն մը գնել, որպէսզի ան ձեւաւորելու շարժումներ կատարէ իր ազգականներուն ու ընկերներուն առջեւ:

* Թոյլ տալ, որ պատանին ջղայնութեան կամ այլ պատճառներով արտայայտուի ամօթ ու ճաշակ չգիտցող խօսքերով:

Հաւանաբար, ամէնէն աւելի մտահոգիչ է առանց հաշիւ ընելու ապահովել պատանիին «պէտքերը», ինչպէս հագուստներ եւ այլ ծախսերը, նոյնիսկ թերեւս չունենալով այդքան տրամադրելու կարողութիւն: Ծախսի հարցը շատ զգայուն հարց մըն է, որ կարօտ է առողջ հիմերու վրայ անոր հետ վերաբերելու առաքելութեան մէջ: Այդ առողջ հիմերէն կարեւորները կը համարուին հետեւեալները:

* Պատանիին պէտք է բացատրել ընտանիքին տնտեսական պայմանները պարզ ձեւով, յստակ եւ իրապաշտ միջոցառումներով մը մէջ, սակայն նշելով, թէ ըստ պարագաներուն կարողութիւնը ունին անոր կարգ մը պէտքերը ապահովելու:

* Հարկ է պատանիին հետ համաձայնիլ իրեն տրամադրելու սահմանուած գումար մը ամէն շաբթուան սկիզբը, միեւնոյն ժամանակ վատահեցնելով, թէ ան այդ գումարով պէտք է բաւարարուի բացի անակնկալ եւ բացառիկ պարագաներու ժամանակ:

* Արտօնել պատանիին, տնօրինել ու կառավարել իր քիչ դրամները իր փափաքին համաձայն, սակայն կարեւոր է զինք խրատել եւ ուղղել որպէսզի ան ուրիշներու նման շուսթորէն եւ

անհաշիւ ձեւով չծախսէ: Այս միջոցը ապագային համար օգտակար կը դառնայ պատանիին դիմակալելու կեանքի դժուարութիւնները ուղղամտութեամբ եւ պատասխանատուութեամբ:

Շատ կարեւոր հարց մըն է ծնողքին կիրարկած խելացի եւ առողջ իշխանութիւնը մասնաւոր իրենց գաւակին տարիքի այս զգայուն հանգրուանին, որովհետեւ այդ իշխանութեան խորագիրը պէտք է ըլլայ գաւակներուն տրամադրել սահմանուած ազատութիւն, գանձք պաշտպանելու համար խոտորումէ: Զաւակներու հետեւելու եւ անոնց խրատելու եւ ուղղելու համար հարկ է հիմնուել կարգ մը կէտերու վրայ, որոնցմէ ամէնէն կարեւորներն են հետեւեալները:

* Յստակացնել պատանիին տունին մէջ պահանջուած օրէնքին կանոնները, սահմանելով այն բոլոր արժէքները, զորս հարկ է յարգել եւ գործադրել:

* Առիթ տալ կարգ մը արձարծուելիք նիւթերու մասին խօսելու եւ արտօնել զանոնք փոփոխութեան ենթարկելու եթէ բոլոր կողմերը համոզուած են այդ քայլին:

* Ընտանեկան առողջ միջոցառում մը զարգացնել, որպէս բովանդակութիւն ունենալով վատահոլութիւնն ու անկեղծութիւնը, հեռու մնալով ամուսնական տարակարծութիւններէն ու ծնողական ամուլթեանէն:

* Պատանիին ընկերները տուն հրաւիրել, անոնց աւելի մօտէն ծանօթանալու համար, նիւթեր արձարծուելով եւ խօսակցելով անոնց հետ:

* Ծանօթանալ պատանիին յաճախած վայրերուն, վատահ ըլլաու համար այդ վայրերու միջոցառումները յարմարաւորութեան:

* Հետեւիլ պատանիին վարուելակերպին, զինք պահպանելու համար տարբեր տեսակի զարտուղի վիճակներէ:

* Պատանիին զգացնել տալ, թէ ան օժտուած է ծնողներով, որոնք զօրաւոր նեցուկը կը կանգնին եւ գիտացող ու գուրգուրոտ կ'ըլլան ի պահանջեալ հարկին:

Հոգեբանութեան մասնագէտները կը նշեն կարգ մը պարագաներու ընթացքին պատանիին հետ վերաբերումին մէջ խիստ վճռակամութիւն որդեգրելու կարեւորութիւնը: Ինչպէս նաեւ այլ երկրորդական պարագաներու մէջ ծնունդ չառնեն թշնամական զգացումներ:

Խոստովանելի է, թէ ծնողքին ուսերուն բեռնուած պատասխանատուութիւնը ծանր ու դժուար է, սակայն բնաւ պէտք չէ հրաժարիլ այդ դերէն եւ հարկ է հետեւիլ պատանիին բոլոր քայլերուն, հեռու մնալով բռնակալութեան եւ տիրապետութեան միջոցառումներէն:

ԾՆՈՂՔԻՆ ԴԻՄԱԿԱԼԱԾ ԴժՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵՒԱՅԻ ԳԱԼՈՒՍԻՒՆ ԱՌԻԹՈՎ

Ծանօթ է, թէ հիմնական հարցը, զոր ծնողք կը դիմագրաւեն երբ նորածին երեխայ մը մուտք գործէ ընտանիքէն ներս, այն ալ իրենց մեծ գաւակին հակադարձութիւնն է: Յայտնի է, թէ վերջինս աւելի յարձակողական կամ բնաւորութեամբ աւելի քմահաճ պիտի դառնայ, իր ծնողքին քովէն պիտի չհեռանայ եւ նահանջային վարուելակերպ պիտի ունենայ, այսինքն ան կրնայ վերադառնալ փոքր երեխայի շարժումներուն: Օրինակի համար, ան կու լայ առանց լուրջ եւ հիմնական պատճառի, կը մերժէ արտաքին գործածութիւնը եւ երբեմն կը փափաքի կաթը խմել փոքրերու յատուկ կաթամանով:

Այս շարժումները մտահոգութիւն կը պատճառեն ծնողքին, որոնք ընդհանրապէս այս վարուելակերպը կը նկատեն մեծ գաւակին նախանձը եւ թէ ան այս բոլոր շարժումները կը կատարէ անոնց ուշադրութիւնը գրաւելու: Կարգ մը ծնողներ կը զարմանան իրենց գաւակներուն այս հակադարձութեան եւ անզգալբար ոիս կը պահեն անոնց դէմ:

Իրականութեան մէջ ծնողքը ցաւ կը զգան, երբ իրենց գաւակը պատշաճօրէն չի վարուիլ եւ այս մտածումները իրենց կորսնցնել կու տան նորածինին զայլուստին բերկրանքը: Սակայն ինչդիրը այս ձեւով չէ:

Ճանչցուած իրողութիւն է, թէ իրենց սիրած անձերուն շարժումները կրկնելը երեխային արտայայտութեան միջոցն է՝ անոնց հանդէպ իր ունեցած զգացումներուն: Մինչեւ եղբօր կամ քրոջ մը գալուստը այս տեսակի սէրը հարց պէտք չէ դառնայ, որովհետեւ երեխային աշխարհը կը կազմուի զի-

րենք շրջապատող չափահաս անձերով եւ անոնց սէրը կ'օգնէ իր հոգեկան աճման:

Նորածին երեխայի մը գալուստով ամէն ինչ կը փոխուի, որովհետեւ շարժումները կրկնելու սովորութիւնը վտանգաւոր կ'ըլլայ: Ընտանիքին անդրանիկ գաւակը կը սկսի նորածինին կապելու եւ անոր նման վարուիլ: Ան դժուարութեան կը հանդիպի, որովհետեւ կը մտածէ, թէ ինչպէս կրնայ սիրել նորածինը առանց վնաս հասցնելու անոր, եւ հետեւաբար, ան միջոցներ կը փնտռէ այս նեղ կացութեան դուրս գալու:

Երեխային համար դժուար պիտի ըլլայ այս հարցը լուծել, որովհետեւ ան պէտք է խուսափի երեք բաներէ.

Ա) Իր մօր շարժումները կրկնել: Ան կրնայ իր մօրը օգնել նորածինին հոգ տանելու:

Բ) Նորածինին շարժումները կրկնել: Այս ի յայտ կու գայ իր հակադարձական վերաբերմունքին մէջ:

Գ) Իր հօր շարժումները կրկնել: Կարգ մը երեխաներ խելացի ձեւով կը վարուին եւ կը փորձեն նորածինին սորվեցնել պատշաճութիւնը:

Երեխային կիրարկած այս լուծումները լաւ կը թուին ըլլալ, սակայն միեւնոյն ժամանակ այդպիսով ան կը վնասէ ինքզինքին: Յստակ է, թէ այս ճգնաժամը նախանձի ճգնաժամէ աւելի ինքնութեան հարց է: Ան գիտէ, թէ կը սիրէ իրմէ ամբողջովին տարբեր եղող անձեր եւ միեւնոյն ժամանակ պահէ իր անհատականութիւնը: Սակայն ան չի կրնար այս քայլին մէջ յաջողիլ առանց ծնողքին օգնութեան ու միջամտութեան:

ՊԶՏԻԿԸ ԵՒ ՅԱՅԵԼԻՆ

Բնաւ ուշադրութիւն ըրա՞ծ եւ նկատած էք, թէ պատկեր ինչպէս կը վարուի հայելիին հետ. կը ինդայ անոր, կը շարժի անոր առջեւ ու կը պարէ: Հայելին երեխային համար կարեւոր միջոց մըն է սորվելու, յայտնաբերելու եւ գուարճանալու, եւ ան անոր կը դիմէ բնազդաբար, շատ փոքր տարիքէն:

Արդարեւ, հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք այս երեւոյթին կարեւոր հանգրուանները:

* Նորածին եղած ժամանակ. Եթէ անոր սենեակին մէջ մեծ հայելի դնես, նորածինը կը հետեւի անոր ընդմէջէն արտացոլող լոյսին: Անոր ներգործութիւնը կը յայտնուի իր ուրախութեամբ եւ արթուն վիճակով:

* Զորս ամսու տարիքին. -

Ձեւեր կ'ընէ անոր առջեւ, առանց գիտնալու, որ անոր մէջ երեւցողը ինքն է:

* Եօթ/ութ ամսու տարիքին. - Կը խօսի հայելիին հետ. անոր առջեւ դէմքի տարբեր արտայայտութիւններ կ'ընէ, այսպիսով աստիճանաբար ինքզինք յայտնաբերելով:

* 1-էն 1.5 տարիքին. - Ան անակնկալի կու գայ իր շարժումներուն եւ հայելիին մէջ կրկնուող ձեւերուն միջեւ: Ձեւերը կը շարժէ, առջեւ-հետեւ կ'երթայ անոր առջեւ, որպէսզի ստուգէ իր տեսածին ստույգ ըլլալը: Եւ կամաց-կամաց, լեզուական կարողութիւններ վաստակելով եւ առարկաներուն անուններուն ծանօթանալով, երեխան կը գիտնայ, որ ինք իրեն յատուկ մարմին ունի:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՌԳԻ ՐԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՐԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680

Հ.Մ.Մ. Ի ՄԱՐՏԱՐԱՐԱԷՐԸ ԴԵՊԻ 100-ԱՄԵԱԿ

Շարունակում է 1-ին

սկսեալ, ըլլայ հիւսիսային Սուրիոյ Հայաստան հայկաբնակի քե՛ր Դամասկոսի կամ Լիբանանի մէջ՝ մարմնամարգական շարժման միջոցաւ աշխատեցաւ իր շուրջ համախմբել դեռեւս իրենց գաղթականական տիրութեան ապրող հայնորահաս պատանիներ, երիտասարդք եւ հայ ընտանիքներ: Անոնց գիտակցական կեանքին մէջ, Հ.Մ.Մ. իր հասակ առնող եւ կազմաւորուող հայնոր սերունդներու մէջ շեշտուածորէն սերմանեց անմնացորդ յարգանք, սէր ու գաղափարապաշտնութիւն: Երկուստեք ինչ որ հանդէպ հայ մշակոյթին, ազգին, հայրենիքին եւ հայ գաղթական հոսանքները օրին գրկաբաց ընդունող ասպնջական ժողովուրդներուն հանդէպ: Անոնց մէջ գարգացուց հայապահպանման գոյարհին եւ ազգի պահանջատիրական դատին արդար լուծման միշտ հաւատարիմ եւ հետամուտ՝ ազգային ոգին:

Այս երախտագէտ ոգին հանդիսացաւ Հ.Մ.Մ. ի կարգախօսք ամենուրեք՝ Եգիպտոսի քե՛ր՝ Քուէյթի մէջ, Լոնտոնի քե՛ր՝ Փարիզի մէջ, Ուրուկուէյի քե՛ր՝ Արժանքինի մէջ, Պրագիլի քե՛ր՝ Գալիֆոնիոյ մէջ եւ ամէն ուր: Ծնորհիւ այդ մարմնամարտի մարդկայնական կարգախօսին՝ Հ.Մ.Մ. պատրաստեց հայեցի ինքնութեամբ հպարտ եւ ազգային արժանապատուութեամբ ուժեղ հաւատարմոր հայն ու իր հասարակութիւնը:

Այս ամէնը կարենալ իրագործելու համար սակայն, անհրաժեշտ էր ստեղծել խանդավառիչ մթնոլորտ, արձանագրել հմայող յաջողութիւններ եւ հեռակայ ընդհանրական ծրագիրներ:

Այդ էր հիմնական դրդապատճառը, որ Հ.Մ.Մ. ուր ալ գտնուեցաւ՝ գործեց միջազգային չափանիշերու համապատասխանող օրինական պայմաններու ներքին:

Ան Հիմնեց սկաուտական բարձրորակ շարժումներ, որոնց՝ պետական հրաւերներու ընդառնադրաբար տողանցները հպարտութեամբ կը լեցնէին մէն մի հայու սիրտը: Կազմակերպեց պասիւնտայոյի, փինկփոնկի եւ հեծելանիւթի որակաւոր, այլապէս գնահատելի շարժումներ եւս: Հիմնեց ֆուտբոլի առաջնակարգ եւ երկրորդական խումբեր, որոնք յարանում վերելք արձանագրեցին, ձեռք ձգելով յաղթական բաժակներ եւ արտյանութիւններ: Անգամ եղան Հ.Մ.Մ. - ական ֆուտբոլիստներ, որոնք ընդգրկուեցան միջազգային արտյանական մրցաշարներուն մասնակցող երկրի ազգային խումբերէն ներս, մեծ վարկ ապահովելով իրենց ներկայացուցած երկրին, Միջին Արեւելքի աշխարհատարածքէն ներս: Այս բոլորին գուցահեռ, Հ.Մ.Մ. դարձաւ Հայաստան-Սփիւռք կապերու սերտացման գլխաւոր օղակներն մին:

Ինչպէս կ'ըսէ ժողովրդական ասացումները՝ «Պատիւս Արժանաւորաց», Հ.Մ.Մ. արժանացաւ երախտաշատ հայ մարգասէր գանգուածներու բարձր գնահատութեան, իր հիմնադրութեան 90-րդ յոբելյանական տարուան առիթով, որ ինքնին նոր մանապարհի ուրուագծում էր դէպի իր հիմնադրութեան յետագայ Ադամանդեայ 100-րդ Տարեդարձին:

ԲԱՑԱՌԻԿ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ Հ.Մ.Մ. ՆՇԵՑ ԻՐ 90-ԱՄԵԱԿԸ

Շարունակում է 1-ին

Ս.Գ.Հ.Կ. վարիչ մարմնի եւ Հ.Մ.Մ. ի տարբեր կառույցներու, ինչպէս նաեւ հայ մամուլի եւ բարեկամ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Տեղի ունեցաւ Հ.Մ.Մ. ի պատմութեան տարբեր հանգրուանները ներկայացնող տեսաերկիցի ցուցադրութիւն, ինչպէս նաեւ մոմավառութիւն: Այս առթիւ ելուցիւններ ունեցան Հ.Մ.Մ. ի Շրջանային վարչութեան ատենապետ Կէրի Սիւնանեան, Հ.Մ.Մ. ի Կեդր. վարչութեան նախկին ատենապետ Տիգրան Սարգսեան եւ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, որոնք շնորհաւորելով Հ.Մ.Մ. ի 90-ամեակը, բարձր գնահատեցին անոր ազգանուէր առաքելութիւնը, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

Այս առթիւ յատուկ յուշատարակում էր յանձնուեցաւ օրուան նախագահ Տիգրան Թադէոս Քէօրօղլեանին եւ ծաղկեփունջ մը Տիգրան Քէօրօղլեանին, որոնք այս առթիւ 10,000 տոլար նուիրեցին Հ.Մ.Մ. ին: Միութեան պատուոյ գիր տրուեցաւ Հ.Մ.Մ. ի Փաստիւնայի Հիմնադիրներէն եւ առաջին ատենապետ՝ Փիթըր Տարագձեանին:

Երեկոյի պաշտօնական բաժինէն եւ ընթրիքէն ետք տեղի ունեցաւ պարահանդէսի բաժինը: Յատկապէս Լիբանանէն ժամանած պէջրութեանց էսթրատային շնորհալի երգիչ Պերճ Նագաշեան՝ հայկական, արաբական եւ միջազգային երգերով ստեղծեց իսկապէս տօնական խանդավառ մթնոլորտ մը, որ տեւեց մինչեւ առաւօտեան առաջին ժամերը:

Հանդիսութիւնը ձեռնհասօրէն վարեց Տիգր. Ծովիկ Քէօրօղլեան: Մանրամասնութիւնները յաջորդ թիւով:

Յատկապէս Լիբանանէն ժամանած պէջրութեանց էսթրատային շնորհալի երգիչ Պերճ Նագաշեան՝ հայկական, արաբական եւ միջազգային երգերով ստեղծեց իսկապէս տօնական խանդավառ մթնոլորտ մը, որ տեւեց մինչեւ առաւօտեան առաջին ժամերը:

Հանդիսութիւնը ձեռնհասօրէն վարեց Տիգր. Ծովիկ Քէօրօղլեան: Մանրամասնութիւնները յաջորդ թիւով:

ԵՐԵՔ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակում է 15-ին

Նոյն բաժինն մէջ կան նաեւ յոբելյանական էջեր ի պատիւ Թեմիս Առաջնորդ Տ. Յովնան Արքեպիսկոպոսի գոյգ ձեռնադրութեանց տարեդարձներուն՝ քահանայական 30 եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան 20 ամեակներու առիթով, որուն կը յաջորդէ գիրքի հեղինակին ընծայուած մեծարանքը հանդէպ վաթսուներեակ իր գրական վաստակին՝ կազմակերպութեամբ թէքէնան Մշակութային Միութեան:

Գիրքին վերջին բաժինը փունջ մը եկեղեցիներու մասին ու ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ կը ներկայացնէ իրենց յատուկ աղբիւրագիրութեամբ: Ի միջի այլոց այդ 20 յոդուածներուն մէջ կան

Գէորգեան ձեռնարանի եւ Արմաշու Դպրեվանքի մասին յատուկ գրութիւններ:

Տէր Զաւէնի այս հատորը պիտի ներկայացնէ Գերշ. Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Թապազեան:

(Գ) ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՏՕՆԵՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՒԵԼԱԶԱՅԵՐԷՆ

Հատորին հեղինակն է Կարո Պետրոսեան: Սոյն կարեւոր գործի երկրորդ տպագրութիւնն է, 300 էջ ծաւալով, այս անգամ արեւելահայերէնի թարգմանուած՝ որուն օգտակարութիւնը կը զգացուէր մեր վարժարաններէն ներս: Հատորը կը բովանդակէ Հայ Եկեղեցւոյ տօները ըստ Հայ Եկեղեցւոյ «Տօնացոյց»-ին ուր կը պարզաբանուին մեր տօներուն պատմական հիմքն ու իւրաքանչիւրին բերած կրօնական եւ դաւանական ուսուցումները:

Գիրքին տիրապետող աղբիւրն է Աստուածաշունչ Մատենաբ. յատկապէս Նոր Կտակարանը, որուն շուրջ դասաւորուած են տօները, նկատի ունենալով նաեւ «Վարք Սրբոց»-ն ու հայ մատենագիրները որոնք մեզի հասցուցած են արժանահաւատ տեղիք Սուրբերու կեանքին վերաբերեալ:

«Սուրբք եւ Տօնք» հատորը, որ անցեալ դարուն տիրող առձեռն աղբիւրն էր գրուած մեծ հոգեւորական թորգոմ Պատրիարք Գուշակեանէ, Կարո Պետրոսեանի տաղանդաւոր եւ բծախնդիր քննարկութեամբ դարձած է շատ աւելի ճոխ, պատկազարող եւ պարզաբանեալ, թէ՛ բարձրագոյն դասարաններու ուսանողներուն համար որպէս կրօնքի դասագիրք, եւ թէ՛ հաւատացեալ ժողովուրդին համար որպէս օգտաշատ աղբիւր:

Գիրքը պիտի ներկայացնէ համայնքիս մտաւորականներէն Բարսեղ Գարթալեան:



Յովհաննէս Իմաստասէր Կաթողիկոսի «Հայոց Կանոնագիրք»-ի վերլուծումը, «Նարեկ» աղօթամատենանի աշխարհաբար թարգմանութեանց մասին եւ հայ եկեղեցական մշակոյթի յուշարձաններու վերաբերեալ յոդուածներ, «Կնիք Հաւատոյ» դաւանաբանական հատորի մասին ուսումնասիրութիւն մը,

ՀՆՈՐԱԻՈՐԱՆՔ

Տէր եւ Տիգր. Եղիա եւ Սեդա Մագմանեան բախտաւորուած են աղջիկ գաւակով մը՝ զոր անուանած են Սեւանա: Այս ուրախ առթիւ «Արսէն Կիտուր» մասնաճիւղը կը շնորհաւորէ նորածինին ծնողքը, մեծ հայրն ու մայրը Տէր եւ Տիգր. Աւետիս եւ Ալիս Մագմանեան եւ բոլոր հարազատները:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Մի ոմն գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի քաղաքական ուղին եւ բովանդակութիւնը առ ի գնահատանք \$150 կը նուիրէ «Մասիս»-ի բարգաւաճման ֆոնտին:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
Փաստիւնայի լաւ շրջանի մէջ,
Washington փողոցի մօտերը 1 սենեակով վարձու տուն
Վարձքը \$900 տոլար
Մանրամասնութեան համար
հեռաձայնել (310) 466-7775



ԻՐԱՔԵԱՆ ՔԻԻՐՏԻՍՏԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՅԱՅՏԱՐԱՐԵ

Լոնտոնի մէջ լոյս տեսնող «Ալ Շարք Ալ Առուսաթ» օրաթերթին փոխանցմամբ՝ իրաքեան Գիւրտիս-տանը մտադիր է յայտարարել իր լիակատար անկախութիւնը: Օրաթերթին համաձայն, այս զարգացումը մեծ վտանգ մը կը ներկայացնէ Անգարայի համար: 1991-ին ձեւաւորուած հիւսիսային իրաքի քրտական ինքնավարութեան ղեկավարութիւնը այնքան ալ սերտ յարաբերութիւններ չի պահպաներ Պաղատաի իշխանութիւններուն հետ: 2005-ին իրաքի սահմանադրութիւնը լայն իրաւունքներ շնորհեց քրտական ինքնավար շրջանին: 2006-ին, քրտական ինքնավարութեան շրջաններուն

մէջ արգիլուեցաւ իրաքեան դրօշը: Հիւսիսային իրաքի քրտները ունին իրենց սեփական խորհրդաւանը, բանակը, օդակայանները, համալսարանները: Յիշեցնենք, որ Նոյեմբեր ամսուան սկիզբը, Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան գլխաւոր բանագնաց Քաթրին Աշթըն յայտարարեց. «Եթէ Միջին Արեւելքի 40 միլիոն քրտներու պահանջները համապատասխանեն Միջին Արեւելքի մէջ կատարուող փոփոխութիւններուն, եւ եթէ քրտները որոշեն իրենց ճակատագիրն ու ապագան, Եւրոպական Միութիւնը չի խոչընդոտեր անոնց կեցուածքը եւ կը յարգէ անոնց որոշումները»:

ԵԳԻՊՏՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՆԳՐՈՒՄԸ ԱՒԱՐՏԵՑԱՒ

Եգիպտոսի մէջ աւարտեցաւ խորհրդարանական ընտրութիւններու առաջին հանգրուանը: Պէտք է նշել, որ քուէարկութեան երկրորդ օրուան մասնակիցներուն թիւը, Երկուշաբթի օրուան հետ համեմատելով նուազած էր: Առաջին հանգրուանի ընտրութիւնները կ'ընդգրկէին ինը նահանգներ? Գահիրէ, Աղեքսանտրիա, Ասիւթ, Կարմիր Մոլ, Լիւքսոր, Էլ Ֆայում, Փորթ Սայիտ Քաֆր Ալ Շէյխ եւ Տուսիթ:

Համաձայնութիւն ձեռք բերուած է Միջին Արեւելքի քաղաքականութեան շուրջ: Ըստ ձեռք բերուած համաձայնութեան, Իսլամական եղբայրակցութիւնը իր հսկողութեան տակ պիտի վերցնէ համայն Միջին Արեւելքը: Փոխարէնը, անոնք կը պարտաւորուին հրապարակէն ջնջել Ալ Քալիտան: Իսրայէլեան մամուլը կ'աւելցնէ, թէ այս բանակցութիւնները ընթացած են ՍԻ. ԱՅ. ԷՅ. ի պետ Տէյվիտ Փեթրայոսի հովանաւորութեամբ: Եգիպտոսի պարագային, արդէն իսկ կասկածներ կը շրջին, թէ զինուորական գերագոյն խորհուրդը գաղտնի համաձայնութիւն կնքած է Իսլամական եղբայրակցութեան հետ:

Ընտրութիւններու երկրորդ հանգրուանը տեղի պիտի ունենայ 14 եւ 15 Դեկտեմբերին: Իսրայէլեան մամուլը կը գրէ, թէ, Ուաշինկթընի եւ Իսլամական եղբայրակցութեան միջեւ փոխ-

ՅԵՌՈՒ ՄՆԱՅԷ ԱՆՅԱՄԱՐՍՈՒԹԵՆԷ

Շարունակուած էջ 16-էն
* Երբ «բարեկամ»իդ հետ կապուելու ցանկութիւնը ծանրաբեռնէ քեզ, ուշադրութիւնդ շեղէ՝ հաճելի արարք մը կատարելով: Այդպիսով այդ զգացումներդ անակնկալօրէն պիտի փարատին:
* Մտածէ, թէ այս անձը ինչո՞ւ այսքան կարեւոր դարձած է քեզի համար: Ուրիշ նուազ վնասակար ձեւ չկա՞յ կեանքիդ դատարկ բաժինը լեցնելու: Օրինաւոր յարա-

բերութեանդ մէջ ի՞նչ փոփոխութիւններ կրնաս բերել, որպէսզի բարելաւուի ան:
* Եթէ ընկերակիցդ սկսած է կասկածիլ այս հարցին առնչութեամբ, ուրեմն հաւանաբար դուն անզիտակցօրէն աւելի մխրճուած ես այս «բարեկամութեան» մէջ: Իրականութիւնը խոստովանիլը կրնայ ցաւցնող ըլլալ, բայց այդ առիթ կու տայ ձեր միջեւ վստահութիւնը վերանորոգելու եւ վերակերտելու:

«ԴԻՏՈՐԴԱԿԱՆ» ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԻՍԿԵՆՏԵՐՈՒՆԻ ՄԷՋ

Իսրայէլեան լրատուական աղբիւրներ կը հաղորդեն, թէ ՆԱԹՕ-ն եւ Արաբական Մոցի անդամ պետութիւնները ներկայացնող զինուորական կցորդներ, «Դիտորդական» առաքելութիւն մը ստեղծած են Թուրքիոյ Իսկենտերունի շրջանին մէջ: Անոնց պարտականութիւնը պիտի ըլլայ հետեւիլ Սուրիոյ ներքին զարգացումներուն: «Դիտորդական» առաքելութեան մաս կը կազմեն Միացեալ Նահանգները, Ֆրանսան, Գանատան, Քաթարը, Սէուտական Արաբիան եւ Արաբական Միացեալ Էմիրութիւնները: Մոսկուայի մէջ լոյս տեսնող «Իզվեսթիա» օրաթերթը իր երէկուան համարին մէջ գրած է, թէ Ռուսիա 2012-ի ընթացքին, ռազմանաւեր պիտի ուղղարկէ Սուրիա:
ՄԱԿ-ի կողմէ նշանակուած մարդկային իրաւանց պաշտպանութեան հետաքննիչները բազմաթիւ խախտումներ արձանագրած են Սուրիոյ մէջ: Հետաքննիչ յանձնարումներ նախագահ Փաուլո Փինիէյթո հաստատեց մարդկութեան դէմ գործուած ոճիրներուն իրողութիւնը: Այս ծիրին մէջ, Արաբական Լիկան անգամ մը եւս սուրիական իշխանութիւններէն պահանջեց ստորագրել մշակուած փրոթոքոլը: Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուալլէմին յղուած նամակի մը մէջ, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Նեպիլ Արապի դիտել տուաւ, որ փրոթոքոլը ստորագրելու

պարագային, Լիկան պատրաստ պիտի ըլլայ վերանայելու նախապէս առած իր որոշումներուն: Եւրոպական Միութիւնը նոյնպէս կ'ուսումնասիրէ շարք մը պատժա-միջոցներ: Սուրիական մամուլը անտեսեց Արաբական Լիկայի պատժա-միջոցները, ընդգծելով, որ Արաբական Լիկան գործիքի մը վերածուած է Արեւմուտքի եւ Իսրայէլի ձեռքին տակ: Արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուալլէմ Սուրիոյ ներքին տագնապը միջազգայնացնելու դիտաւորութիւնկատեց Արաբական Լիկայի քայլը: ՄԱԿ-ի մօտ Գերմանիոյ եւ Միացեալ Նահանգներու դեսպանները աւելի վճռական քայլեր պահանջեցին Սուրիոյ դէմ: Թուրքիա սպառնաց Սուրիան գրկել տարանցիկ երկրի դերէն եւ իրաքի վրայով կատարել իր ցամաքային փոխանակումները:
Դամասկոսի մէջ, երկրին նոր սահմանադրութիւնը մշակող յանձնախումբի խօսնակ Սամ Տըլա լրագրողներուն յայտնեց, թէ նոր սահմանադրութիւնը կուսակցութիւններուն անխտիր կը շնորհէ գործունէութեան հաւասար իրաւունք եւ ոչ մէկ մենաշնորհում կը խոստանայ քաղաքական որեւէ կուսակցութեան:
Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրով Մոսկուայի մօտ ընդունեց արաբական պետութիւններու դեսպանները: Ան մերժեց Սուրիոյ տագնապին մէջ արտաքին միջամտութիւնները եւ թելադրեց միջին լուծումներով կարգաւորել հակամարտութիւնը:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ԼԻԻՍԻ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի Նոր Սերունդ Մշակութային Միութեան կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար Նոր Սերունդ Մշակութային Միութիւնն ու հանգուցեալի հարազատները շնորհակալութիւն կը յայտնեն՝
Տէր եւ Տիկ. Համբիկ Սարաֆեան \$100
Տիար Ալպէր Մինասեան \$50
Տէր եւ Տիկ. Տիրան Սարաֆեան \$50

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Միմա Կիրակոսեան իրենց խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն, յատկապէս Տիար Պօղոս Մուլթաֆեանին:
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

Burbank Airport

Bid Request General Contractors

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E11-22, Module 12.12 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, January 12, 2012. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: Thirty-two (32) Single Family Condo Units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport's Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department via web site or in person at the Home Sound Office. Bids submitted by firms who have not registered with Airport via website or in person will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for December 21, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport's Home Sound Office, 4540 W. Chermak Ave, Burbank, California.

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1714-A

THE BUILDING SIGNAGE AT NICKERSON GARDENS AND MAR VISTA GARDENS HOUSING DEVELOPMENTS.

The Housing Authority of the City of Los Angeles invites vendors to submit firm fixed price bids for the Building Signage at Nickerson Gardens and Mar Vista Gardens housing developments. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2500 Wilshire Blvd, Penthouse Floor, Suite A, Los Angeles, CA, 90057, until 2:00 p.m. (local time), December 7, 2011.
12/1/11
CNS-2210190#
MASSIS WEEKLY

ՈՒՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէ՛ք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

massispost.com
daily news updates

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Շարունակուած էջ 13-էն

շնորհիւ Պօղոս Նուպարի դիւանա- գիտութեան, միացեալ ճակատով ուզեց ներկայանալ Վեհաժողովին հրաւիրելով Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Աւետիս Ահարոնեան, որոնք երկուքը միասնաբար, Ազգային Պատուիրակութիւն եւ Հայաստանի Հանրապետութիւն, 1919 փետրուար 12 թուակիր յուշագիր մը ստորագրեցին եւ ներկայացուցին Փարիզի Վեհաժողովին:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Վեհաժողովին ներկայանալու նախապատրաստութեան համար 1919 թուի փետրուար 24-էն Ապրիլ 22 տեղի ունեցաւ Հայկական Համագումարը որուն մասնակցեցան մօտ 40 ներկայացուցիչներ 10 երկիրներէ եկած, նախագահութեամբ Պօղոս Նուպարի: Ակնարկով դէմքերէն էին Եղիշէ Արքեպս. Դուրեան, Գաբրիէլ Նորատուկեան եւ Փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան: Յուշագիրը գոր պատրաստեցին կը պահանջէր հետեւեալ ինքիւնները:

1- Ճանաչում հայ անկախ պետութեան՝ վեց նահանգներով, առաւել Տրապիզոն, Կիլիկիա, եւ Հայաստանի կովկասեան հողերը:

2- Հայկական պետութիւնը պիտի դրուի դաշնակից պետութիւններու եւ Միացեալ Նահանգաց Ամերիկայի երաշխաւորութեան տակ:

3- Փարիզի Վեհաժողովին Հայաստանի համար անմիջական օժանդակութիւն ակնկալել:

4- Վեհաժողովը պէտք է որոշէ հատուցում կատարել դարմանելու համար հայ ազգին կրած անհաշուելի կորուստներուն դիմաց:

5- Համագումարը փափաք յայտնած է միաձայնութեամբ որ Միացեալ Նահանգներ նշանակուի Հայաստանի որպէս հոգատար, որուն համար ալ Նախագահ Ուիլսոն յայտնած էր իր տրամադրութիւնը:

Այս վերջին յայտարարութիւնը Ուիլսոն անձամբ ըրած էր Պօղոս Նուպարին եւ Աւետիս Ահարոնեանին՝ թարգման ունենալով Փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան: Ուիլսոն ըսած էր անոնց թէ «Ամերիկեան ժողովուրդին կամքն է որ ես ապահովեմ հայոց անկախութիւնը եւ պաշտպանեմ անոնց իրաւունքները»: Սակայն, հակառակ Ուիլսոնի անկեղծութեան եւ իրաւամիջամտութեան, իր կառավարութիւնը համաձայն չեղաւ իր ծրագիրներուն, եւ հայկական հոգատարութեան գործը մնաց անհետեւանք: Նոյնիսկ Ուիլսոնի գծած Միացեալ Հայաստանի քարտէզը թուղթի վրայ մնաց եւ երբեք չիրագործուեցաւ:

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՎԱՍՏԱԿԸ

Մեծ եղաւ իր վաստակը որ իր անունը սերտօրէն կապեց մեր ազգի սրտին հետ, միութիւն մը որ պիտի մնայ որպէս փառքի պսակ իր յիշատակին: Յետագայ ձախողութիւնները երբեք չմարեցին իրաւ արժանի-

քը մեծանուն հայուն, որ անհաւատալի հանձար ցոյց տուաւ դիւանագիտական եւ պետական մարզերէն ներս, վերագանցելով իր հայրը՝ Նուպար Փաշա Նուպարեան՝ Եգիպտոսի արտաքին գործոց նախարարն ու վարչապետը:

Պօղոս Նուպար նուիրեց իր բովանդակ ժամանակն ու կորովը, իր պատուաբեր անունն ու դիրքը, մտքի եւ հոգիի կարողութիւնները, լայնօրէն կենսագործելով կրթական եւ ազգային գործերը: Գահիրէի Գալուստեան ազգային վարժարանի ընդարձակ շէնքերուն շինութիւնը ինքն էր ստանձնած, եւ շուտով եղաւ նաեւ Հելլոպոլիսի Նուպարեան Ազգային վարժարանի շինութեան բարերարը: 1924-ին հիմնեց Հայ Ուսանողական Հիմնարկութիւնը՝ Պրիւքսէլի Համալսարանի ոստանին մէջ, եւ Փարիզի համալսարանական ակադեմիան մէջ ալ կերտեց Հայ Ուսանողական Տունը:

Մեծ բարերարին անունով Երեւանի արուարձաններէն մին կոչուեցաւ Նուպարաշէն Պօղոս Նուպարի յատկացուցած մեծ արդիւնքերով: Իր կեանքի վերջին տարիները անցուց Փարիզի մէջ ուր եւ իր կեանքը կնքեց 1930 թուի Յունիսի 6-ին, 79 տարիքին, երբ նոյն տարին վախճանած էին իր սրտակից հոգեւորականները՝ Տ.Տ. Գէորգ Ե. Սուրբեանց Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Երուսաղէմի հայոց Տ. Եղիշէ Պատրիարք Դուրեանը: Երեքը միասին փակեցին 20-րդ դարու առաջին երեսնամեակին մէկ էջը, բաց պահելով սակայն յետագայ տասնամեակներու եւ դարերու մեր ազգին եւ եկեղեցիին «արդար եւ բարի ճանապարհը»: պատիւով եւ անկորնչելի սիրագործութիւններով:

Թորգոմ Պատրիարք Գուշակեանի ոսկեղնիկ բառերով «հայութեան սիրան է միայն Պօղոս Նուպարի վերջին հանգստարանը, ու անոր պատմութիւնը՝ այն շրջանակը որ միայն պիտի կարենայ ընդգրկել իր պատկերը»:

ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՇԸ

Այստեղ որպէս եզրափակիչ տուրք կ'ուզեմ յիշել մեր օրերու մեծանուն բարերար Ալեք Մանուկեանի մէկ յուշը: Տարիներ առաջ երբ ՀԲԸՄիութեան ցկեանս Նախագահ Տիար Ալեք Մանուկեան Ֆլորիտա կը գտնուէր, ինծի պատմեց պատանեկան իր յուշերէն հետեւեալը: «Գասապայի հայոց վարժարանի մեր պատմութեան դասագիրքին մէջ նկատեցի շարք մը նկարներ, որոնց մէջ կար Պօղոս Նուպար Փաշայի նկարը: Բոլոր նկարներուն մէջէն սիրեցի այդ նկարը եւ մեծ չափերով գծեցի իր դիմանկարը ու տեսչութեան ներկայացուցի ըսելով որ ծախուի եւ դպրոցը ընդունի գումարը որպէս նուէր»: Ահա վերեւ յիշուած «արդար եւ բարի ճանապարհը» որուն հետեւեցաւ մեծանուն Նախագահ Ալեք Մանուկեան՝ դառնալով իսկական յաջողը հիմնադիր Փաշային՝ ոչ աւելի, ոչ պակաս:

ԿԻԼԻԿԵԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ 90-ԱՄԵԱԿ

Շարունակուած էջ 8-էն

Շնորհակալութեամբ, Ա. Քիրիշեան

ԿԻԼԻԿԵԱՆ 90-ամեակ Հարցազրոյց Կիլիկեան ճեմարանի աշխուհի տնօրէնուհի Տիկ. Անի Մելքոնեան Պոյաճեանի հետ

Հարց. Երկար տարիներ ուսուցչական ասպարէզի մէջ մնալէ ետք 2002 թուականին ստանձնեցիք Կիլիկեան ճեմարանի տնօրէնութեան պաշտօնը, ի՞նչ էր տարբերութիւնը այս սրբազան նուիրում ունեցող գոյգ պաշտօններուն:

Պ. Կ'եկորդեմ ձեր խօսքը թէ երկուքն ալ սրբազան պաշտօններ են: Ուսուցչութիւնը կոչում ունեցող սուրբ առաքելութիւն մըն է հակառակ անոր որ ուսուցիչը կը սպառի հոգեպէս եւ մարմնապէս, սակայն կը ստանայ հոգեկան մեծ բաւարարութիւն: Տնօրէնութիւնը շատ աւելի դժուարին ու շատ աւելի մեծ պատասխանատուութիւն պարտադրող գործ է, որ կը պահանջէ դիւանագիտութիւն, անձնագործութիւն եւ հսկայ համբերութիւն:

Հ. Ուսուցչական ասպարէզի մէջ տարիներու ձեր ունեցած փորձառութիւնը որքանով նպաստեց ձեր առանձնած տնօրէնութեան պաշտօնին:

Պ. Ես համոզուած եմ որեւէ գործի կամ ասպարէզի մէջ յաջողելու համար նախընտրելի է այս գործին մասին որոշ գաղափար մը եւ ինչու չէ փորձառութիւն մը ունենալ, հետեւաբար նախօրօք ունեցած ուսուցչական փորձառութիւնս մեծապէս նպաստեց տնօրէնութիւն-ծնողք, տնօրէնութիւն-ուսուցչական կազմ փոխ յարաբերութեան, ինչպէս նաեւ ընդհանուր դասականութեան գործընթացին:

Հ. Այժմու հոգաբարձութեան խիզախ որոշումով եւ կարգ մը գիտակից Կիլիկեանցիներու օժանդակութեամբ Կիլիկեան Մայք Նազարէթեան մանկապարտէզը արդէն վերանորոգման գործընթացի մէջ է

ինչպէս կը պատկերացնէք նորակառուց այս մանկապարտէզը:

Պ. Կիլիկեան մանկապարտէզը ինծի համար միշտ եղած է տաքուկ, տնային ջերմ մթնոլորտ յիշեցնող վայր մը հետեւաբար բնական է որ վերանորոգուելէ ետք աշակերտը պիտի վայելէ իր աւօրեան շատ աւելի հանգիստ պայմաններու մէջ ուսուցչական կազմին առիթը պիտի հայթայթուի նոր գաղափարներ յղանալու եւ դասաւանդութեան նոր արդիական մեթոտներ կիրարկելու:

Հ. Որպէս երիտասարդ տնօրէնուհի ինչպէ՞ս է ձեր փոխ յարաբերութիւնը ուսուցչական կազմին ծնողներուն եւ աշակերտներուն հետ:

Պ. Ես կը կարծեմ թէ տարիքէն աւելի մարդու գիտակցութիւնն է որ դեր կը խաղայ որեւէ փոխ յարաբերութեան մէջ: Անշուշտ չեմ հերքեր որ տարիքի մերձեցումը ուսուցիչներու եւ ծնողներու, կրնայ իր դրական ազդեցութիւնը ունենալ գաղափարներու ու մտածելակերպի նմանութեան գծով, բայց ես անձնապէս իմ յարաբերութիւններս կը հաստատեմ փոխադարձ սիրոյ, յարգանքի ու հասկացողութեան վրայ:

Հ. Ինչ հեռանկարներ ունիք 90 ամեայ այս անգուգական դարբնոցին Կիլիկեան ճեմարանին:

Պ. Շատ մեծ յարգանք կը տածեմ Կիլիկեան ճեմարանին որպէս Սուրբ Պատրիարքին վրայ հիմնուած առաջին հայկական ճեմարան որ երկարամեայ տարիներ գործած ու կը գործէ շնորհիւ անձինք նուիրեալներուն եւ կը հաւատամ որ այնքան ատեն որ անկեղծ կիլիկեանցիներ մէկ ընտանիքի պէս կը բոլորուին իրենց դպրոցին շուրջ Կիլիկեան ճեմարանը կը մնայ ու կը գոյատեւէ որպէս հայկական հոգիի ու մտքի դարբնոց, ի վերջոյ շնորհակալական խօսք «Մասիս» շաբաթաթերթին ու մասնաւորաբար ձեզի Օր. Անի այս հաճելի միջոցառումին համար, կը մաղթեմ ձեզի անհատուած յաջողութիւն եւ նորանոր նուաճումներ:

CHRISTMAS PARTY
DECEMBER 24, 2011
7:30PM

SEPAN BANQUET HALL
3404 GLENDALE BLVD.
Los Angeles, CA 90039

SPECIAL APPEARANCE BY SANTA CLAUSE

\$49
LIVE DJ, FULL COURSE DINNER AND UNLIMITED DRINKS INCLUDED

FOR MORE INFORMATION OR FOR TICKETS, PLEASE CALL (818) 333-0018

massispost.com
daily news updates